2009, ՓԵՏՐՎԱՐ Ա, ԹԻՎ 3 (287)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

12 փետրվարի

## ՌԴ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկային եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի եւ ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Նիկոլայ Պավլովի:

Ողջունելով հյուրին՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների միջեւ առկա դարավոր բարեկամությանն ու երկու երկրների սերտ համագործակցությանը տարբեր ոլորտներում:

Խոսելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու սերտ կապերի մասին՝ Նորին Սրբությունը նաեւ շնորհավորեց պրն Չայկային Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ի ընտրության եւ գահակալության առիթով:

Իր հերթին պրն Չայկան անդրադարձավ երկու պետությունների միջեւ առկա ջերմ հարաբերություններին: Նա վստահություն հայտնեց, որ երկու դատախազությունների համագործակցությունը բարի արդյունավորում կունենա եւ կծառայի երկու ժողովուրդների բարօրությանը:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս եպս Ներսիսյանը եւ Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Մովսես եպս Մովսիսյանը:



## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՍՐԱՅԵԼԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իսրայելի արտակարգ եւ լիազոր դեսպան Շեմի Ցուրին:

Շնորհավորելով դեսպանին նշանակման առիթով՝ Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները հղեց նրան:

Իր խոսքում Նորին Սրբությունն անդրադարձավ հայ եւ հրեա ժողովուրդների պատմական ընդհանրություններին եւ կարեւորեց նրանց միջեւ առկա հարաբերությունների առավել սերտացումն ու զարգացումը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ աշխարհում խաղաղության հաստատման եւ ժողովուրդների միջեւ բարեկամության ամրապնդման գործում կրոնական առաջնորդների կարեւոր դերակատարության մասին:

## ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ

«Եվ բոլորը վառված լույսերով եկան տաճար՝ Տիրոջն ընդառաջ, եւ ասացին. «Տերն անցավ այս դռնով», ուստի եւ տոնի օրն անվանվեց ... «Տէր ընդ այս» (Տերը սրա հետ), որն աղավաղելով ասում են՝ Տրընդես»:

*(սբ Գրիգոր Տաթեւացի)*



Քրիստոսի Ծնունդից քառասուն օր հետո՝ փետրվարի 14-ին, առաքելահիմն Հայոց Ս. Եկեղեցին նշում է Տյառնընդառաջի, այսինքն՝ Տիրոջն ընդառաջ գնալու, դիմավորելու տոնը: Այն նվիրվում է Ղուկասի Ավետարանում տեղ գտած այն իրշատակությանը, թե Հովսեփն ու Մարիամը քառասնօրյա Հիսուսին Բեթղեհեմից «Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, ինչպես գրված է Տիրոջ օրենքում» (Ղուկ. Բ 22):

Ըստ Մովսեսի օրենքի՝ հրեական ընտանիքի յուրաքանչյուր առաջնեկ որդի ընծայվում էր Տիրոջը: Բացի դրանից՝ մայրը ծնունդից քառասուն օր հետո պարտավոր էր որդուն տաճար բերել ու մեղքերից ազատվելու համար մի ոչխար եւ երկու տատրակ կամ աղավնի զոհաբերել՝ Տիրոջ առջեւ իր գոհությունը հայտնելով: Իսկ ընտանիքի աղքատության դեպքում կարելի էր միայն երկու տատրակ կամ աղավնի զոհել (Ղեւտ. ԺԲ 2-8): Ս. Աստվածածինն ու արդար Հովսեփը, իհարկե, հնազանդվեցին օրենքին եւ 40-րդ օրն Աստվածորդուն տաճար բերեցին, «որովհետեւ այդպես վայել է, որ կատարվի Աստծո ամեն արդարություն» (Մատթ. Գ 15): Մուտքի մոտ նրանց ընդառաջ եկավ Երուսաղեմում բնակվող մի ծերունի՝ Սիմեոն անունով, որ թարգմանաբար նշանակում է «լուռ»: Նա, ինչպես վկայում է Ղուկաս ավետարանիչը, Աստծո ընտրյալներից այն մեկն էր, որ սպասում էր Փրկչին: Սիմեոնին ի վերուստ հայտնի եղավ, որ նա չի մեռնի, մինչեւ աշխարհ չգա մարդկությանը խոստացված Մեսիան՝ Քրիստոսը:

Հին պատմիչները եւ հոգեւոր հայրերը հայտնում են, որ Եգիպտոսի արքա Պտղոմեոսը, որ թագավորում էր Ք. ա. 285-247 թթ., ցանկացավ սուրբ գրվածքներով եւ նյութերով համալրել նշանավոր Աղեքսանդրիայի գրադարանը: Ուստի Երուսաղեմից մեկնիչների ու գիտնականների հրավիրեց, որպեսզի այդ սուրբ գրվածքները հունարեն թարգմանեն: Ավանդության համաձայն՝ շուրջ 70 թարգմանիչների թվում էր նաեւ Սիմեոնը: Վերջինս, հրեական բնագրում կարդալով Եսայի մարգարեի «Ահա Կույսը պիտի հղիանա ու Որդի ծնի» (Ես. Է 14) խոսքերը, որոշում է, որ «կույս» բառը վրիպակ է, եւ փոխարենը պետք է լինի «կին»: Ու երբ սկսում է ուղղում կատարել, հանկարծ մի հրեշտակ է հայտնվում եւ, բռնելով նրա ձեռքը, ասում է. «Հավա՛տ ունեցիր գրված խոսքերի նկատմամբ եւ կհամոզվես, որ դրանք իրականություն կդառնան, ուստի մահ չես ճաշակի այնքան ժամանակ, մինչեւ չտեսնես Քրիստոսին, որ կծնվի մաքուր եւ անարատ Կույսից»: Այդ օրվանից բարեպաշտ Սիմեոնը սկսեց սպասել Աստծուց խոստացված Մեսիային: Ահա մի օր ծերունին, ասես հատուկ նախախնամությամբ, ինչպես վկայում է սրբազան ավանդությունը, բոլորած իր 360 տարին, մտավ Երուսաղեմի տաճար հատկապես այն պահին, երբ այնտեղ բերեցին Աստվածորդուն: Տեսնելով Մանկանը՝ Սիմեոնը Սուրբ Հոգու ներշնչումով հասկացավ, որ իր առջեւ է տեսնում աշխարհի Փրկչին: Այդ ժամանակ նա մոտեցավ, իր մահկանացու եւ զառամյալ ձեռքերի մեջ առավ Հիսուսին, որի համար նրան կոչում են Աստվածընկալ, եւ Արարչին գոհաբանելով՝ մարգարեորեն բարբառեց. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային՝ ըստ Քո Խոսքի, որովհետեւ աչքերս տեսան փրկությունը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար, եւ փառք՝ Իսրայելի Քո ժողովրդի համար» (Ղուկ. Բ 29-32): Այդ խոսքերը լսելով՝ Հովսեփն ու Մարիամը անակնկալի եկան, քանի որ դրանք հստակորեն վկայում էին, որ Աստծո գաղտնիքը հայտնի է դարձել նաեւ բարեպաշտ Սիմեոնին: Շարունակելով մարգարեանալ՝ ծերունին դիմեց Մարիամին՝ հետեւյալ խոսքերով. «Ահա Սա Նա է, որ պատճառ է դառնալու Իսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման եւ նշան՝ հակառակության: Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան» (Ղուկ. Բ 34-35):

Նույն պահին տաճարում էր գտնվում նաեւ մարգարեուհի Աննան՝ 84 տարեկան մի այրի կին: Նա, որ վանամայր էր, եւ կարծիք կա, որ Մարիամը նրա սանուհիներից էր, գիշեր-ցերեկ չէր հեռանում տաճարից՝ պահքով ու աղոթքով Աստծուն ծառայելով: Եվ տեսնելով մանուկ Հիսուսին՝ նա եւս մարգարեական հոգով զգաց ու գոհություն մատուցելով Տիրոջը՝ վկայեց ներկաներին Մանկան Ով լինելը:

*Շարունակությունը՝ էջ 2*

# ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ

*Սկիզբը՝ էջ 1*

Այսպիսով, այդ երկու ծերունիները՝ բարեպաշտ Սիմեոնը եւ Աննա մարգարեուհին, իրենց երկրավոր օրերի մայրամուտին դարձան, ասես, Փրկչին ընդառաջ եկող ողջ Հին Ուխտի մարդկային ներկայացուցիչները, եւ ի հիշատակ Աստվածորդու ու բարեպաշտ Սիմեոնի եւ Աննայի այդ հանդիպման՝ եկեղեցական այս տոնը կոչվեց Տյառնընդառաջ: Փաստորեն այդ իրադարձությունը կապեց իր ավարտին մոտեցող Հին Ուխտը Նորի հետ: Ս. Ավետարանից գիտենք, որ արդար ու երկյուղած Սիմեոնը եւ մարգարեուհի Աննան սուրբ անձինք են, սակայն նրանց առանձին տոն չի նվիրվում, այլ Սիմեոնի տոնը Քրիստոսի քառասնօրյա գալստյան տոնի հետ է նշվում, իսկ Աննայի հիշատակը կցվել է յուղաբեր կանանց անուններին:



Ինչպես նախապես նշվեց, Աստվածահայտնության տոնը՝ իբրեւ տնօրինական խորհուրդ, նվիրվում է քառասնօրյա Հիսուսի՝ տաճարին ընծայմանը: Հետագայում հունվարի 6-ին նշվող Քրիստոսի Ծնունդը, համարվելով Աստվածահայտնության հիմնական խորհուրդը, դարձավ գլխավոր տոն եւ առանձնացավ մյուս տնօրինություններից: Արեւմուտքում եւ Արեւելքում, քանի որ Քրիստոսի Ծնունդը սկսեցին տոնել դեկտեմբերի 25-ին՝ հունվարի 6-ին միայն Մկրտությունը նշելով, ապա Տյառնընդառաջը, 25-ից հաշվելով 40 օր, փոխադրվեց փետրվարի 2-ին: Եվ միայն Հայ Եկեղեցին, հավատարիմ մնալով առաքելական ավանդությանը, այսինքն՝ նախկինում արդեն ընդունված կարգին, փետրվարի 14-ին է նշում:

Տյառնընդառաջի տոնը ծագել է շատ վաղուց եւ դեռեւս Դ դարում Երուսաղեմի Եկեղեցու հայտնի տոներից էր: Հետագայում այն փոխանցվեց մյուս Եկեղեցիներին եւս: Արեւելյան եւ Հայ Եկեղեցիներում այս տոնը տերունական է համարվում՝ նկատի ունենալով քառասնօրյա Քրիստոսի տաճար գալն ու ընծայումն Աստծուն: Իսկ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցում նվիրվում է Աստվածածնին եւ կոչվում է «Սրբութիւն Սրբուհւոյ Կուսին», «Մաքրագործութիւն Կուսին» եւ այլն՝ նկատի ունենալով Տիրամոր սրբացումը:

Այս տոնի մասին կան բազում հիշատակություններ սբ Հովհան Ոսկեբերանի, սբ Կյուրեղ Աղեքսանդրացու եւ Եկեղեցու մյուս հայրերի գրվածքներում, որոնք վկայում են, որ այն առաջներում նշանավոր տոների թվին էր պատկանում: Հայ Եկեղեցում, ըստ տարբեր վկայությունների, նույնպես հանդիսավորությամբ է նշվել այս տոնը: Իսկ ինչ վերաբերում է այդ օրը կրակ վառելու սովորությանը, ապա դա հեթանոսական ծագում ունի, որին հետագայում տրվեց նոր՝ քրիստոնեական իմաստ:

Սակայն ամեն դեպքում Եկեղեցու կողմից խոտելի է նկատվում կրակի վրայից ցատկելը կամ դրա շուրջը պտտվելը: Իսկ «այդ օրը կրակ ենք վառում, քանի որ երբ Տերը մոտեցավ տաճարին, դուռն ինքն իրեն բացվեց, եւ մեծ շարժում եղավ, ու քաղաքը դղրդաց տիեզերքի օրինակով: Եվ բոլորը վառված լույսերով եկան տաճար՝ Տիրոջն ընդառաջ, դրա համար մենք էլ նույն օրինակով կրակ ենք վառում եւ միացնում ջահերը՝ կատարելու Տիրոջ գալստյան նախատոնակը...» (սբ Գրիգոր Տաթեւացի):

*Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել.*

## Ս. Գրիգոր Տաթեւացի. «Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ»

«Հին Կտակարանի գրքերի մեկնություններ» շարքից Հայ Առաքելական Եկեղեցու եռամեծ վարդապետ սբ Գրիգոր Տաթեւացու «Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ» աշխատությունը, որի գլխավոր խմբագիրը Եզնիկ արք. Պետրոսյանն է: Երկը հրատարակության է պատրաստել Հակոբ Քյոսեյանը: Գիրքը տպագրվել է Արմեն եւ Նունե Սարգսյանների մեկենասությամբ:

Սույն հրատարակությունն օգտակար կարող է լինել ինչպես հայ մեկնողական գրականությամբ հետաքրքրվողներին, այնպես էլ ընթերցող լայն շրջանակներին:

## «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարան

«Հայ Եկեղեցու հանրագիտարան» շարքից հրատարակվել է առաջին պրակը՝ նվիրված Ամենայն Հայոց կաթողիկոսներին՝ սկսյալ սբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետից մինչեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հանրագիտարանում տեղեկատվության կարգով ներկայացված են նաեւ բոլոր աթոռակից կաթողիկոսները, սակայն առանց նրանց գործունեության վերլուծության՝ բացառությամբ միայն այն դեպքերի, երբ աթոռակից կաթողիկոսը, ընտրվելով Ամենայն Հայոց կաթողիկոս, իր վրա է վերցրել ընդհանրական կաթողիկոսի գործառույթները: Հանրագիտարանը հրատարակության են պատրաստել Սաթենիկ Բաբայանը, Պետրոս Հովհաննիսյանը եւ Ղեւոնդ քահանա Մայիլյանը: Այն լույս է տեսել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Վիգեն արք. Այքազյանի մեկենասությամբ:

«Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարանը, լինելով Հայոց Եկեղեցու պատմության յուրօրինակ արտահայտությունը, միաժամանակ հայոց պատմության համարժեք նկարագիրն է: Ի տարբերություն նախորդների՝ այս հանրագիտարանն առավել ամբողջական ու համապարփակ է ներկայացնում հայոց կաթողիկոսների գործունեությունը: Թարմացվել են նաեւ մատենագիտական ցանկերը: Ներկայացված Հայոց Հայրապետների վավերական պատկերները սկսվում են ԺԹ դարի սկզբներից եւ շարունակվում մինչեւ մեր օրերը: Գրքում օգտագործվել են ինչպես վավերական պատկերներ, այնպես էլ նախորդ դարերի մանրանկարներ:

Խմբագրական հանձնախումբը լիահույս է, որ հանրագիտարանի լույս ընծայումը կարեւոր նշանակություն կունենա Հայոց Եկեղեցու պատմության ուսումնասիրության եւ քարոզչության տեսանկյունից՝ հարստացնելով Հայ Եկեղեցու վերաբերյալ ընթերցողի գիտելիքները:

## Ս. Բարսեղ Կեսարացի. «Գիրք Պահոց»

«Եկեղեցական մատենագրություն» շարքի հաջորդ հրատարակությունը Ընդհանրական Եկեղեցու նշանավոր հայրապետներից սբ Բարսեղ Կեսարացու «Գիրք Պահոց» աշխատությունն է: Գիրքը լույս է տեսել Կիմ Մուրադյանի աշխատասիրությամբ, իսկ հրատարակության է պատրաստել Գուրգեն Գասպարյանը:

Ս. Բարսեղ Կեսարացու (329-379) «Պահոց գիրքը» հայոց թարգմանական մատենագրության կոթողային գործերից է, որ ձեռագրերում, երբեմն էլ տպագիր գրականության մեջ կոչվում է նաեւ «Վասն պահոց», հաճախ էլ՝ պարզապես «Պահոց»: Այն հիմնականում բովանդակում է հեղինակի որոշ ճառական-մեկնողական գործեր, ինչպես նաեւ թղթեր եւ դավանական բնույթի հարցումներ (ընդհանուր հաշվով՝ 33 բնագիր):

# ՈՒԽՏԱՆԵՍ

**(920/930 - 986)**

*Ուխտանեսը հայ միջնադարյան պատմագրության լավագույն ավանդույթների շարունակողն է: Հայտնի է իր «Հայոց պատմություն» աշխատությամբ, որի ձեռագիրը 17-րդ դարի արտագրություն է: Գրաբար բնագիրը լույս է տեսել 1871-ին (**Ուխտանէս Եպիսկոպոս,** Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871), իսկ աշխարհաբար փոխադրությունը՝ 2006 թ. (**Ուխտանէս Եպիսկոպոս,** Հայոց պատմութիւն, Ե., «Հայաստան», 2006: Փոխադրութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վարագ Առաքելեանի: Գիրքը հրատարակվել է դասական ուղղագրությամբ: Բնագրում հղումները կատարվում են այս գրքից՝ նշելով գլուխը կամ էջը): Նրան հիշել են հետագա շրջանի մատենագիրներ Մխիթար Այրիվանեցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը եւ ուրիշներ: Ուխտանեսի կյանքի եւ ժառանգության ուսումնասիրությամբ զբաղվել են շատ հայագետներ՝ Մ. Չամչյան, Գ. Զարհիանալյան, Ա. Զամինյան, Ն. Ակինյան, Մ. Աբեղյան, Ս. Քոլանջյան եւ ուրիշներ:*



### ԿՅԱՆՔԸ

Ուխտանեսն ապրել եւ ստեղծագործել է 10-րդ դարում Սեբաստիայում, եղել է եպիսկոպոս, թեմի առաջնորդ:

Լիկիանեսի բռնությունների պատճառով Սեբաստիայում հանուն հավատի նահատակված 40 մանուկների համար սահմանել է եկեղեցական տոն: Հալածանքներից հետո այդ վայրերում այնքան եկեղեցիներ են կառուցվել, որ կոչվել է Եկեղեցաձոր:

Գանձակեցին նրան հիշում է որպես Ուռհայի եպիսկոպոս, ինչը, հավանաբար, նրա գործունեության՝ Գանձակեցուն հայտնի դրվագն է:

Գրքի պատվիրատուն եղել է Նարեկա վանքի վանահայր, հռչակված ուսուցիչ եւ գիտնական Անանիա Նարեկացին:

Ըստ Ն. Ակինյանի՝ Ուխտանեսն իր գրքի պատվիրատու Անանիա Նարեկացուն հանդիպել է 980 թ., իսկ գիրքը գրել է 982-ին (**Ն. Ակինեան,** Բանասիրական հատակտորներ, Բեյրութ, 1944, էջ 57): Գիրքը գրելիս Ուխտանեսը եղել է առաջացած տարիքում, որովհետեւ Ա հատվածի Ա գլխում այսպես է գրում. «Իսկ որ քո հրամանին ընդդիմացայ՝ իմ տկարութիւնը պատճառ բերելով...» (էջ 19), «Որպեսզի իմ տկարութեամբ թերեւս կարողանամ ըստ քո ցանկութեան կատարել այնչափ յօժարութեամբ քո կամեցածը...» (էջ 20): Շարունակության մեջ նաեւ գրում է. «Ուսումով կրտսեր եմ, ամենքից ետինը, իսկ տարիքով՝ աւելի փոքր, քան իմ բազմաթիւ պաշտօնակիցները...» (էջ 20): Տարիքով փոքր նա իրեն կարող էր զգալ 70-80 տարեկանների համեմատ, որ նշանակում է՝ գրության պատվերն ստանալու ժամանակ Ուխտանեսը կարող էր լինել 50-60 տարեկան: Սա էլ նշանակում է, որ ծնված պետք է լինի 920-930-ական թվականներին: Ըստ Ա. Զամինյանի՝ 986-ին Սեբաստիայի հոգեւոր առաջնորդն այլեւս Ուխտանեսը չէր, ուստի պետք է վախճանված լինի մինչ այդ (*տե՛ս **Ա. Զամինեան,*** Հայ գրականութեան պատմութիւն, Նոր Նախիջեւան, 1914):

Գիրքն Ուխտանեսին Անանիա Նարեկացին, ամենայն հավանականությամբ, պատվիրել է ուսումնական նպատակների համար՝ որպես դասագիրք: Հակառակ դեպքում՝ նախնիներին համառոտելով՝ կրկնելով, վկայակոչելով, չէր փորձի ի մի բերել հայոց պատմության հայտնի էջերը: Առաջին գլխի վերջին էջերում Ուխտանեսը խոսում է կրթության, ուսուցչի եւ աշակերտների մասին. «Քանզի ուսուցիչը այլ կերպ չի կարող փայլել, եթէ աշակերտի լապտերները վառած չգտնի ուսման սիրոյ ձէթով: Եւ դարձեալ [ասում է], թէ աշակերտը այլ կերպ չի կարող աճել, եթէ ուսուցիչը իմաստասիրութեան առուն չհեղի նրա առջեւ» (էջ 29): Ահա այս նպատակների համար է Ուխտանեսը գրում իր գիրքը՝ խոստանալով իր խոսքերը ճշտել եւ հարմարեցնել «ըստ անհրաժեշտութեան պատշաճի՝ անչափը բերելով չափաւորութեան, եւ չափաւորը զարգացնեմ, աւելորդը հանեմ, պակասութիւնը ըստ կարողութեան լրացնեմ եւ ամբողջը մի ըստ միոջէ դասաւորեմ՝ իւրաքանչիւրն [իր] բովանդակութեան համաձայն» (էջ 30):

Սրանից հետո շարադրում է իր աշխատության, այսինքն՝ դասագրքի ծրագիրը. «Նախ՝ [պետք է դասաւորեմ] մեր թագաւորների եւ հայրապետների թեւը, եւ ապա՝ Վրաց բաժանումը Հայոց միաբանութիւնից, եւ դրանից յետոյ՝ [այն] ազգի մկրտութիւնը, որ կոչւում է Ծաղ, նաեւ այն երկրում գտնուող գաւառները, գլխաւոր գիւղերն ու քաղաքները եւ բերդերը, <...> նաեւ վանքերը՝ վանականներով հանդերձ <...>, եւ մենակյացների անապատները...» (էջ 30):

Ուխտանեսը ներկայացնում է նաեւ իր գրքի ստեղծման հիմունքը. «Դարձեալ նաեւ սկիզբը եւ ծագումն ու պատճառները կը պատմեմ, թէ որտեղի՞ց, կամ ի՞նչ, եւ կամ ինչպէ՞ս, եւ կամ ինչի՞ համար, եւ կամ որպէ՞ս, եւ կամ ի՞նչ օրինակով» (էջ 30):

Գրքի՝ ուսումնական նպատակներով գրված լինելու հանգամանքը հաստատում են նաեւ շարադրանքի ընթացքում տեղ գտած որոշ արտահայտություններ. «Հաւաստին բազում բաներից որչափ կարողանանք համառօտ կը պատմենք քեզ, ո՛վ դու ուսումնասէր ու խոհե՛մ» (I, ԺԴ, էջ 38): Այս ուսումնասերն ու խոհեմը, անշուշտ, աշակերտն է: Նույնը նաեւ այստեղ. «Եւ այս բաները մենք [էլ], կարճ-կարճ վերցնելով, համառօտակի պատմեցինք քեզ, ո՛վ դու ուսումնասէ՛ր» (I, Խ, էջ 62):

### ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ է հասել Ուխտանեսի «Հայոց պատմության» երկու հատվածը (գլուխ): Երրորդ հատվածը, որը հայտնի էր 13-րդ դարում, համարվում է կորած: Կորած է համարվում նաեւ երկրորդ հատվածի մի մասը:

*Շարունակությունը՝ էջ 4*

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՊՈՂՈՍ Բ ԳԱՌՆԵՑԻ

## (1418-1430)

*Սկիզբը՝ թիվ 2*

Այս դժնդակ ժամանակները հայտնի են նաեւ այլ նահատակներով: Նահատակվեցին նաեւ Հեսվա Սբ Գամաղիել վանքի վարդապետ Ստեփանոսը, Խիզան քաղաքից քահանա Պետրոսը եւ Ստեփանոս Սորբեցին, որոնք բոլորն էլ երիտասարդ էին: Տեսնելով այդ ծանր կացությունը՝ առաջին երկուսը նամակ ուղարկեցին Խիզանի դատավորին, որի առաջ ուրացել էին, եւ մեկնեցին Բարեձորի վանքը, ուր մեկ տարի առաջ հողին էին հանձնվել հաբեշ քահանաները: Նրանք 3 օր մնացին վանքում, խոստովանեցին եւ հաղորդվեցին եւ 1424 թ. հունիսի 1-ին վերադարձան Խիզան ու մտան եկեղեցի: Նրանք զղջացին իրենց ուրացության համար, իրենց շրջապատող քրիստոնյաներին հեռացրին, որ իրենց պատճառով փործանքի չգան, եւ մահմեդականներին բացատրեցին իրենց դարձը: Ամբոխը նրանց տարավ դատավորի մոտ, եւ երբ նրանք չհրաժարվեցին քրիստոնեությունից, Պետրոս քահանային սրով ու փայտով սպանեցին՝ նախապես բազուկները բրով ջարդելով, իսկ Ստեփանոս քահանային էլ կացնով, թրով, փայտ ու քարով սպանեցին, երբ նա պատասխան հարված հասցրեց իրեն ապտակած դատավորին: Դա տեղի ունեցավ Համբարձման ուրբաթ օրը:

Լսելով նրանց նահատակության մասին՝ Ստեփանոս Սորբեցին էլ հրաժարվեց ուրացությունից՝ քաջալերվելով նաեւ մոր կողմից: Երբ սպառնալիքներն օգուտ չտվին, տեղի այլազգիները նրա վրա հարձակվեցին ու սպանեցին: Նա նահատակվեց 9 օր անց՝ 1424 թվի հունիսի 11-ին:

Նահատակվեց նաեւ «Յայսմաւուրք»-ի նոր կազմող, տաղերի եւ գանձերի հեղինակ Գրիգոր Խլաթեցին, որ հայտնի է նաեւ Ծերենց վարդապետ անունով: Նա 8 տարի աշակերտել էր Որոտնեցուն եւ Տաթեւացուն, հետո Սուխարու վանքում 2 տարի՝ Սարգիս Ապրակունեցուն: Հետո կրկին աշակերտեց Գրիգոր Տաթեւացուն, երբ վերջինս Մեծոփ էր եկել: Նա դարձավ Սալնապատի վանքի առաջնորդ՝ Վարդան Հոգոցեցուց հետո: Այստեղ առանձին հաջողության չհասնելով իր շուրջն աշակերտություն հավաքելու գործում՝ նա քաշվում է Ցիպնայի վանքը՝ զբաղվելով ընդօրինակություններով եւ «Յայսմաւուրք»-ի կազմման աշխատանքներով: Այդ գործով նա զբաղվեց 50 տարի եւ 70 տարեկանում ուխտի մեկնեց Երուսաղեմ, որտեղից երկու տարի անց վերադարձավ կրկին Ցիպնա: Նա 75 տարեկան էր, երբ կարա-կոյունլու Իսքենդերի զորքերն Արճկե արշավեցին եւ մտան նաեւ Ցիպնա: Միաբանները փախան, սակայն չկարողացան ծերունի Խլաթեցուն էլ տանել, որը չէր կամենում իր սիրելի վանքը թողնել: Նա հայտարարեց, որ այդտեղ կմնա եւ այդտեղ էլ կմեռնի: Նա ընկավ թուրքմեն ասպատակների ձեռքը, որոնք ստիպեցին նրան ուրանալ քրիստոնեությունը եւ հաջողության չհասնելով՝ նրան պարզապես մորթեցին: Նա նահատակվեց 1425 թ. մայիսի 9-ին: Մ. Օրմանյանի հաշվարկով իրականում այդ պետք է կատարված լիներ 1426 թվի մայիսի 19-ին՝ Հոգեգալստի կիրակի օրը: Նրան հողին հանձնեց Հակոբ Ճգնավորը, որն իր մահկանացուն կնքեց մեկ տարի անց: Նա Գրիգոր Խլաթեցու աշակերտներից էր: Մ. Օրմանյանը նրա մահը դնում է 1427 թվի մայիսի 27-ին:

Արճկեի ավարառությունից 2 տարի անց Իսքենդերի զորքերն ասպատակեցին Ռշտունիքը: Նրանք մեծ կոտորածներ կազմակերպեցին: Դրանց մեջ էին Հակոբ Օվսաննացի վարդապետը՝ Անձղնապատ վանքից, որին թաղեցին Նարեկա վանքում՝ Գրիգոր Նարեկացու գերեզմանի հարեւանությամբ: Այդ նույն ժամանակ Ղազար Բաղիշեցի վարդապետը փախուստի դիմեց դեպի Սասուն, սակայն ճանաչվեց եւ չուրանալու համար՝ մահմեդականների կողմից սպանվեց: Նահատակվեց Սիմեոն Այրիվանեցի վարդապետը, որը թերեւս Տաթեւացու աշակերտ Սիմեոն Սյունեցին է: Նա նշանավոր էր վանական կանոնների մշակմամբ, վանական զգեստի վերաբերյալ կարգադրություններով եւ այլն: Նրա մահն ընկնում է 1428 թ.: «Յայսմաւուրք»-ը մայիսի 9-ին է դնում Վարդենի կամ Վարդենիկ կույսի կուրացումը: Նա իր կուսությունը պահելու ու իրեն հետապնդող երիտասարդից ազատվելու համար իրեն կուրացրեց: Կույսի ազգությունը չի նշվում, սակայն անունը բավարար է, որ մենք իմանանք նրա ազգությունը:

Իսքենդերի տիրապետության շրջանը, իրոք որ, դժնդակ



ժամանակաշրջան էր հայ ժողովրդի համար: Քաղաքական այդ թոհուբոհի մեջ Պողոս կաթողիկոսին չէր հաջողվում ամրապնդել իր կապերը բուն հայաստանյան թեմերի հետ, որոնք մեծ մասամբ գործում էին ինքնագլուխ՝ նշանավոր վարդապետների գլխավորությամբ: Աղթամարի կաթողիկոսությանն այդպես էլ չհաջողվեց վերածվելու միակ հայրապետական աթոռի: Ճիշտ է՝ այն շարունակում էր գոյատեւել, սակայն նրան չէին ենթարկվում Տաթեւացուն աշակերտած վարդապետները, որի հետեւանքով Աղթամարի ենթակայության տակ մնացին միայն Արճկեի, Արճեշի, Բերկրիի գավառները: Դրան մեծապես նպաստեց Դավիթ կաթողիկոսի մահը 1423 թվին: Նրան հաջորդելու համար մեծ պայքար սկսվեց: 1423-ից մինչեւ 1437 թվականը հիշվում է 21 կաթողիկոս, որոնք գլխապտույտ արագությամբ հաջորդում էին մեկը մյուսին, մինչեւ որ Դավիթ կաթողիկոսի եղբորորդուն՝ Զաքարիային, հաջողվեց ուժեղանալ եւ տիրանալ կաթողիկոսությանը: Առանձնապես լավ չէր նաեւ ունիթորների դրությունը: Քաղաքական անհանգիստ վիճակը նրանց մեծապես թուլացրեց: Նախիջեւանի եւ Երնջակի ունիթոր վանահայրերն ազգությամբ ոչ միայն հայեր էին, այլեւ օտարազգիներ, ինչը հավաստում է, թե ունիթորությունը, փաստորեն, հանգել էր լատինականացման: Մխիթար Ապարանցին, որ նախուռն ունիթորական էր, անխոհեմ ու անզգույշ մարդ, ատելությամբ լեցուն դեպի իր նախկին հավատակիցները, իր գիրքը հասցնում է մինչեւ 1410 թիվը, որից հետո տեղեկությունները խիստ նվազում են ունիթորների գործունեության մասին:

*Շարունակությունը՝ էջ 6*



# Եկեղեցին եւ ցեղասպանության ճանաչումը

*Ամեն տարի՝ ապրիլի 24-ին, 1,5 միլիոն հայ նահատակների հիշատակը ոգեկոչելու համար սուրբ պատարագ է մատուցվում Հայոց եկեղեցիներում: Պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգստյան կարգ: Այդ օրը հայ ժողովուրդն աղոթում է, որ ոչ մի տեղ չկրկնվի ցեղասպանություն կոչվող ոճիրը:*



## Մեր նահատակները

1900-ական թվականներին Արեւմտյան Հայաստանի եկեղեցիների եւ վանքերի թիվը հասնում էր 2200-ի: Ամեն գյուղ իր ժամն ու քահանան ուներ: Դրանց շուրջ էր հայությունը կառուցում իր հոգեւոր, մշակութային, կրթական կյանքը, դրանց միջոցով էր ընկալվում իբրեւ մեկ հավաքականություն:

1913 թվականին Օսմանյան կայսրության ՆԳ նախարարությունը Կ. Պոլսի Հայոց Պատրիարքությանը պատվիրում է ներկայացնել կայսրության տարածքում գործող հայկական եկեղեցիների ու վանքերի ցանկը: Առաջին աշխարհամարտը երկրի կառավարության համար առիթ հանդիսացավ էթնիկ զտումների ու կոտորածների միջոցով մեկընդմիշտ լուծել հայկական հարցը:

Հայերի մասսայական տեղահանումների ու ջարդերի տարիներին պղծվեցին, ավերվեցին եւ հողին հավասարեցվեցին հազարավոր եկեղեցիներ: Շատերը գերեզման դարձան այնտեղ ապաստան փնտրող հայերի համար: Իսկ կանգուն մնացածները հիմնականում վերածվեցին մզկիթների:

Բագարանի՝ 7-րդ դարում կառուցված Ս. Թեոդորոս եկեղեցին այժմ գոյություն չունի, Մուշի Ս. Կարապետ վանքից ավերակներ են մնացել, Խծկոնքի շքեղ վանքային համալիրից միայն փոքրիկ կառույց է պահպանվել, Ծպնիի եկեղեցին վերածվել է մզկիթի, Շիրակավանի եկեղեցին պայթեցվել է...

Ոչնչացվեցին հոգեւոր-մշակութային բացառիկ արժեքներ: Վասպուրականում այրվել, անհետ կորել է մոտ 3 հազար ձեռագիր մատյան, Տարոնում՝ 2 հազար, Կեսարիայում՝ 700, Արմաշում՝ 250: Ըստ Մեսրոպ եպս Տեր-Մովսիսյանի կազմած ցուցակի՝ եղեռնի ժամանակ թուրքերը ոչնչացրել են 22 հազար հայկական ձեռագիր՝ Աստվածաշունչ մատյաններ, սաղմոսարաններ, մաշտոցներ, ճաշոցներ, ժամագրքեր, պատարագամատույցներ, շարակնոցներ, հայսմավուրքներ, ճառընտիրներ, քարոզգրքեր, հայ, հույն, ասորի, հրեա հեղինակների պատմագիտական ու փիլիսոփայական աշխատություններ, հայկական մանրանկարչության գլուխգործոցներ:

Հայոց մեծ ջարդի ժամանակ նահատակվեց 4 հազար հայ հոգեւորական:

«Այդ սեւ օրերուն,- գրում է Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը,- եկած էր պահ մը, երբ այս աշխարհի վրա այլեւս անհնար էր հայ ըլլալ: Ամեն հույս կորսված կթվեր, եւ հայոց պատմության գիրքը՝ փակված ու արյան մեջ թաղված»:

1,5 մլն նահատակները 1915 թվականին ընկան իրեց օջախների շեմերին, գաղթի ճանապարհներին եւ Դեր Զորում: Հայությունը զրկվեց իր պատմական հայրենիքից:

Համատարած մղձավանջի մեջ բոլորն իրենց հույսը կապում էին Մայր Հայրենիքի, կաթողիկոսի միջամտության հետ: Սոփիայից մի հայ քահանա գրում է. **«Վեհափա՛ռ Հայր, ժողովուրդդ կսպանվի, կանհետացվի, ու չկա ձեռք մը, որ կարենար օգնության հասնել, ձայն մը, որ բողոքեր: Բարձրացրու ձեռքդ, Վեհափա՛ռ Հայր, զարկ բոլոր դռները, աղաղակե՛, աղերսե՛, ըրե՛ կարելին ու անկարելին՝ կասեցնելու համար դահճին բազուկը»:**

Գեւորգ Ե Ամենայն կաթողիկոսին վիճակված էր հայ ժողովրդին առաջնորդել ամենամռայլ մի ժամանակաշրջանում, եւ նա անում էր «կարելին ու անկարելին»՝ փախստականներին օգնելու, տեղավորելու: Սակայն չարագործության դեմն առնելու համար միայն մեծ տերությունների կամքը կարող էր էական դեր կատարել: Այս գիտակցումով Ամենայն Հայոց կաթողիկոսը դիմում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին՝ Թուրքիայի հայերի դեմ սկսված կոտորածները կասեցնելու խնդրանքով: 1915 թվականի ապրիլին Ս. Էջմիածնից կաթողիկոսի անունով խնդրանք-նամակը հասնում է Ռուսաստան:

**«...տեղի է ունենում Էրզրումի, Դերջանի, Զեյթունի եւ մերձակա վայրերի անզեն, անպաշտպան հայերի սպանդ: Իմ հոտը հուզախռով վիճակում է, թախանձագին խնդրում եմ Ձերդ Բարձր Գերազանցությանը հովանավորել ու պաշտպանել իմ ժողովրդին այս օրհասական պահին:**

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ
## (ԱՄԱՍԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏ)



Վանի էյալեթը (հետո՝ վիլայեթ) կազմավորվել է 1548 թ.՝ Վան վարչական կենտրոնով: 1555 թ. Ամասիայի պայմանագրով հաստատվում էր նորաստեղծ վարչական միավորի միացումն Օսմանյան կայսրությանը:

20-րդ դարի սկզբին նրա տարածքը 33 600 քառակուսի կիլոմետր էր, այսինքն՝ ավելին, քան ՀՀ ներկայիս տարածքը (29 740 քկմ): 1913 թվականից բաղկացած էր 2 գավառից՝ Վանի եւ Հաքյարիի: Ներկայումս Վանի նահանգն ընդգրկում է 19 100 քկմ տարածք:

Գտնվելով Օսմանյան կայսրության եւ Պարսկաստանի սահմանագլխին՝ Վանի նահանգը 16-17-րդ դարերում բազմիցս դարձել է արյունալի պատերազմների թատերաբեմ, որի արդյունքում հաճախ ավերվել եւ ամայացվել է: 19-րդ դարի երկրորդ քառորդից պատերազմներին միանում է Ռուսական կայսրությունը: Սակայն այս շրջանում՝ ընդհուպ մինչեւ Առաջին աշխարհամարտը, նահանգը համեմատական անդորրի մեջ էր: Պարբերաբար կրկնվող ջարդերը, բռնագաղթն ու այլ պատճառներով (տնտեսական եւ այլն) արտագաղթը, ինչպես նաեւ Հյուսիսային Միջագետքից մեծ քանակությամբ քրդական ցեղերի եւ Հյուսիսային Կովկասից չերքեզների մուտքը լուրջ փոփոխություններ էին առաջացրել նահանգի էթնիկական կազմում: Չնայած դրան՝ 19-րդ դարի վերջին քառորդում այն Արեւմտյան Հայաստանի առավել հայաշատ նահանգներից էր:

1878-1880 թթ. հայերի թիվը 300 հազար էր, այսինքն՝ հայերը կազմում էին բնակչության շուրջ 60 %-ը: 1894-1896 թթ. համիդյան ջարդերի ընթացքում նահանգում կոտորվեց 20 հազար եւ բռնի մահմեդականացվեց 30 հազար հայ, իսկ գաղթի ճանապարհը բռնեց 20-30 հազարը: Հիմնահատակ կործանվեցին բազմաթիվ հայկական գյուղեր: Զգալիորեն ուժեղացավ մահմեդական տարրը: Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով՝ 1912 թ. նահանգում 197 հազար հայ էր ապրում:

1914 թ. Վանի նահանգի բնակչության թիվը շուրջ 450 հազար էր, իսկ ազգային կազմը հետեւյալն էր. հայեր՝ ավելի քան 210 հազար (ավ. 45 %), քրդեր՝ ավելի քան 123 հազար (27 %), ասորիներ՝ 85 հազար (19 %), թուրքեր՝ 33 հազար (7 %), եզդիներ՝ 6,5 հազար (1,5 %), հրեաներ, չերքեզներ, գնչուներ եւ այլն՝ 2,3-3 հազ. (0.5 %): Հայ բնակչությունը գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանրագույն պայմաններում: Ահա այսպիսին էր իրադրությունը Վանի նահանգում ***Հայոց Ցեղասպանության*** նախօրյակին:

Առաջին աշխարհամարտի սկզբին թուրքական իշխանությունները կազմակերպեցին Վանի նահանգի հայ բնակչության զանգվածային կոտորած: Կովկասյան ճակատում ռուսներից պարտություն կրած թուրքական զորքերը, նրանց ենթակա քուրդ զորախմբերը եւ մահմեդական խուժանը դաժանորեն սպանում էին հայերին, գերագույն հաճույքով թալանում նրանց ունեցվածքը, սառնասրտորեն ավերում հայ շեները: Վանի նահանգի մի շարք գավառներում, ինչպես օրինակ՝ Շատախում, Թիմարում, Հայոց ձորում, Արճեշում, Գավաշում, Ալջավազում եւ այլն, հայերը կազմակերպեցին ինքնապաշտպանություն՝ համառ պայքար մղելով արյունարբու ջարդարարների դեմ: Ամենաերկարատեւն ու ամենաարդյունավետը, ինչպես Վանի նահանգում, այնպես էլ ամբողջ Արեւմտյան Հայաստանում, իհարկե, Վան քաղաքի հերոսամարտն էր:

1914 թ. Վանում բնակվում էր մոտ 41 հազար մարդ, որից 22,5 հազարը՝ հայ, 15 հազարը՝ թուրք, շուրջ 3 հազարը՝ այլազգի (իսկ ըստ Վանի առաջնորդարանի՝ Վանում բնակվում էր շուրջ 58 հազար մարդ, որից 34 հազարը՝ հայ, 21 հազարը՝ թուրք): Քաղաքի հայ բնակչությունը բաժանված էր 2 մասի՝ Այգեստան եւ Քաղաքամեջ թաղամասերում: Առաջինում հայերի թիվը շուրջ 20 հազար էր, երկրորդում՝ 2,5-3 հազար: Սրանք միմյանցից 5-6 կմ հեռավորության վրա էին գտնվում, իսկ նրանց միջեւ բնակվում էին թուրքերը: Մինչեւ 1915 թ. ապրիլ ամիսը Վանում հավաքվել էր շրջակա գյուղերից թուրք եղեռնագործների արյունոտ ձեռքերից մազապուրծ եղած ավելի քան 70 հազար հայ եւս: Այսպիսով, քաղաքում հայության թիվը ապրիլ ամսին հասել էր մոտ 95 հազարի:

Պատրաստվելով ոչնչացնել Վասպուրականի հայությանը՝ թուրքական կառավարությունը Վանի նահանգապետ էր նշանակել Ջեւդեթ բեյին, որը կազմակերպել էր Վանի մի քանի նշանավոր հասարակական-քաղաքական գործիչների՝ Ա. Վռամյանի (Օնիկ Դերձակյան), Իշխանի (Նիկողայոս Պողոսյան) սպանությունը, ապա պատրաստվել Վանի վրա հարձակման:

1915 թ. ապրիլին թուրքական զորքերը պաշարեցին Այգեստանը եւ կտրեցին տեղի հայության կապը Քաղաքամեջի հետ:

*Շարունակությունը՝ էջ 8*

*Սկիզբը՝ էջ 2*

# ՈՒԽՏԱՆԵՍ
## (920/930 - 986)

Այդ կորած համարվող եւ առկա երկու հատվածների մասին հիշատակվում է ձեռագրի վերնագրի մեջ. «Հատուածն առաջին. Յաղագս թագաւորաց եւ հայրապետաց մերոց. եւ երկրորդն. Վասն բաժանման Վրաց. երրորդն. Յաղագս մկրտութեան ազգին այնմիկ՝ Ծադ կոչեցեալ»: Այս երրորդ հատվածի մասին ուղղակի վկայում է Մխիթար Այրիվանեցին. «Եւ սոյն աւուրս բաժանեցան ի Հայոց ազգն Ծադ ի ձեռն Փարսմանայ ու մերն փառամոլ քահանայի, որպէս պատմէ սուրբն Ուխտանես եպիսկոպոսն Սեբաստիոյ» (***Գ. Յովսէփեանց,*** Մխիթար Այրիվանեցի, Երուսաղէմ, 1931, էջ 19):

Շարադրանքն սկսելով Ադամից եւ նրան հիշատակելով թագավորների մեջ՝ Ուխտանեսը դիմում է բազմաթիվ աղբյուրների, որոնցից գլխավորն Աստվածաշունչն է, հաջորդում են «Գիրք թղթոց»-ը եւ հինգերորդ դարի հայ մատենագիրները: Հիշում է նաեւ անուններ, որոնցից այսօր ոչինչ հայտնի չէ, եւ նրանց մեջ՝ Շապուհ Բագրատունուն, որի գրքից քաղվածաբար մեջ է բերում մեկ ամբողջ գլուխ (հատված առաջին, գլ. ՀԵ):

Նրա հիշած անուններն են՝ Ագաթանգեղոս, Զենոբ Գլակ, Մովսես Խորենացի, Մովսես Կաղանկատվացի, Սեբեոս, որի երկը հիշատակվում է «Հերակլի պատմություն» վերնագրով: Ապա հիշատակում է Մովսես Ցուրտավեցու, Սմբատ Բագրատունու, Վրթանես Քերթողի թղթերը, նաեւ Փիլոն Թրակացու (Տիրակացու) ժամանակագրությունը, որը ժամանակին հայտնի է եղել «Գիրք կայսերաց» վերնագրով:

Ուխտանեսը ձգտել է խոսքի վավերականության՝ օրինակ ունենալով առաջին հերթին Մովսես Խորենացուն, որին պատվում է «ստուգագիր», «ճշմարտապատում Մովսես» եւ համանման այլ արտահայտություններով:

Ինքն իր հերթին, գրավոր աղբյուրներից բացի (պատմագիտական երկեր, թղթեր), կարեւորություն է տվել նաեւ իր իմացածին, պարզածին, ստուգածին, հիշողությամբ ավանդվածին...

Ուխտանեսի գրքի պահպանված հատվածները վերնագրված են՝ հատված Ա. «Պատմություն Հայոց հայրապետների եւ թագավորների», հատված Բ. «Հայերից վրացիների բաժանման պատմությունը»: Հատվածները՝ որպես մեծ ամբողջություններ, բաժանված են փոքր մասերի՝ գլուխների: Առաջին հատվածն ընդգրկում է ՀՂ (76), երկրորդը՝ Հ (70) գլուխ:



**Առաջին հատվածի** առաջին գլուխը՝ «Պատասխան Անանիայի նամակին եւ նրա խնդրածը կատարելու խոստում», ունի մուտքի, առաջաբանի բնույթ:

Ուխտանեսն ամենաբարձր գովեստով է խոսում Անանիա Նարեկացու մասին, նրան համարում է իր «պատվական տեր» եւ հոգեւոր հայր: Անանիայի նամակը նրան էր բերել Փիլիպոս անունով մի քահանա, որի մեջ մեծարանքի խոսքեր են ասվել Ուխտանեսի հասցեին: Պատվերն ընդունելուց առաջ Ուխտանեսը ցանկացել է համոզվել դրա վավերականությանը. «Լսել էի նաեւ, որ դու միւս անգամ գալու ես մեզ մոտ, եւ ըստ այնմ սպասում էի, [որ] կը տեսնեմ քեզ եւ երես առ երես կը խօսեմ ու քո շուրթերից ստոյգ [կը լսեմ] եւ յետոյ [միայն] կը ճշտեմ նախապէս քո կողմից գրուածը» (էջ 19): Ուխտանեսը պարկեշտ է եւ կարծում է, որ այսպիսի մի գործ ինքը՝ Անանիան, պիտի ներկայացներ: Մեծարանքները նրա հասցեին շարունակվում են՝ «Ո՛վ պատուական գլուխ եւ պատկառելի», «Ո՛վ աստուածազարդ ու վսեմ իմ տէր, տէ՛ր ու տիեզերական վարդապե՛տ, իբրեւ մի բազմապտուղ ծառ՝ բարձր ու վայելուչ, Նարեկ անուանուած ուխտի աստուածատունկ դրախտի մէջ», «Ո՛վ աստուածաբեալ տէր եւ բազմերջանիկ հա՛յր»:

Դիմելով Անանիային՝ պատմիչն այսպես է ներկայացնում իրեն. «... համարձակւում եմ ծառայի խօսքով [ես]՝ քո յետին ու նուաստ աշակերտդ, կամ թէ որդիդ, եթէ հաճելի է քո մեծապատուութեանը, կամ թէ ինձ համար համարձակելի է՝ Ուխտանէս անուանեալս, որ հրաման առանք նաեւ ողջոյն տալ աշակերտաբար, ինչպէս վայել է հրաշափառագոյն վարդապետին» (էջ 27):

Ուխտանեսը գիտի մեծարման ճիշտ արժեքը, ուստի, հստակորեն տարբերակելով «շաղակրատանքն ու խօսքի պաճուճանքը» արդար գնահատությունից, շարունակում է. «Քանզի իմ ուրախութեան սկիզբը դու ես, որովհետեւ իմ խոհերը եւ սիրտս թեթեւ մտքերով չէ, որ խորամուխ եղած խորհում են քո ճշմարտութեան մասին, այլ խիստ կարեւոր, կատարելագոյն ու գերագոյն: Քանզի նոյն կերպ նաեւ քո [խոհերը] գիտեմ իմ տկարիմաց խօսքերի հանդէպ: Նաեւ իսկապէս տեսնում եմ իրական մեծարանքն իմ հանդէպ, որ փոքր եմ եւ անկատար քո կատարեալ մեծութեան առջեւ, որովհետեւ ես ոչինչ եմ, եւ եթէ ինչ էլ եմ՝ քոնն եմ» (էջ 27):

Այստեղ նկարագրում է իրենց հանդիպումը: Անանիա Նարեկացին այցելել է Խաչիկ վարդապետին եւ նրան ընծա տարել երկաբնակների դեմ գրված եւ այսօր կորած համարվող «Հավատարմատ» գիրքը: Այստեղ այս պատմության մասին երես առ երես խոսել է նաեւ Ուխտանեսի հետ: Նրանք քայլել են դեպի Ախուրյան գետը, նստել են գետի ափին, ընթերցել են Պատարագամատույցը, «եւ օրն ամառային էր, Տրէ ամսին, եւ ամսի տասնմեկն էր, օրը՝ կիրակի, ժամը իննին» (էջ 28): Այս հիշեցումն այն բանի համար է, որ Ուխտանեսը վերստին հավաստի իր ուխտը. «Արդ՝ սա քեզ իմ կողմից նշան եւ կնիք սիրոյ եւ յանձնառութեան խոստման՝ կատարելու քո պահանջը այս պատմութեան վերաբերեալ» (էջ 28):

Ուխտանեսն ակնարկում է նաեւ Անանիայի պատմությունը, «որ ստեղծելու էիր ոչ մեծ հատուածով [Հայոց] նախնի թագաւորների սկզբից մինչեւ մեր [ժամանակը]» (էջ 28): Անանիայի այս գիրքը կա՛մ չի ստեղծվել, կա՛մ չի պահպանվել: Հավանաբար՝ առաջինը: Բայց այս գրքի ընդգրկումը, կառուցվածքը եւ ոչ մեծ հատվածներով շարադրելու ձեւը յուրուցրել է Ուխտանեսը: Ըստ էության՝ Անանիան Ուխտանեսին պատվիրել է գրել այն, ինչ ինքը նախատեսել է, բայց չի իրականացրել եւ գրել այնպես, ինչպես ինքն է մտահղացել: Ուխտանեսն իրականացրել է Անանիայի մտահղացումը՝ ոչ միայն վերջինիս պատվերով, այլեւ թելադրանքով: Ուխտանեսը պնդում է նույնը. «[Լսել էինք], որ Հայոց պատմութեան ուրախարար գիրքը ոչ մեծ կտորներով [է], ինչպես վերեւում ասացինք, որ ստեղծելու էիր ընթերցողներին մխիթարելու եւ լսողներին լուսաւորելու համար» (էջ 29): Եվ ապա. «Որովհետեւ ամենեւին էլ այս բանը չէի ակնկալում, թէ քո կողմից ինձ է վստահուելու [այդ] պատմութիւնը [գրելու] բախտը» (էջ 29): Այնուհետեւ, շարադրելով իր պատմության ծրագիրն ու շարադրանքի սկզբունքը, խոսքն ավարտում է մեծարանքի այդ դիմումով. «Ո՛վ հոգեւոր հեդինակ եւ հռչակաւոր հռետո՛ր» (էջ 30):

Սիրո եւ խոնարհության խորհուրդ ունեցող այս մուտքը նաեւ Ուխտանեսի պատմության գրական արժեք ունեցող ամենաուշագրավ էջերից է:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԿՈՄԻՏԱՍ - 140

Մեր ժողովրդի պատմության մեջ կան անուններ, որոնք «հավերժի ճամփորդ» մկրտություն են ստացել ոչ միայն իրենց ստեղծագործական քանքարի ուժգնությամբ, ոչ միայն համամարդկային մտքերի ու գաղափարների, գեղեցկի ու վսեմի իրենց ձգտումներով, այլեւ, սեւակյան բնորոշմամբ, «քաղաքագետի» («Եվ այր մի Մաշտոց անուն») իրենց բացառիկ ու «բախտորոշիչ» ներդրումով: Մաշտոցից առաջ մեր ժողովրդի կյանքում նման բախտորոշիչ քայլ կատարեց Լուսավորիչը՝ Տրդատ Մեծի համախոհությամբ ու ակտիվ աջակցությամբ: Եթե հանուն հավատի եւ վասն հայրենյաց ոտքի չկանգնեին Վարդանանք, հնարավոր է՝ մարդկության պատմության մեջ ընդամենը մի երկտող մնար Հայաստան աշխարհի մասին: Այս «եթե»-ները թեպետ շատ չեն, բայց հիմնաքարային են ու վճռորոշ մեր լինելության եւ ինքնության ճանապարհին: Եվ ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է խոստովանել, որ եթե չլիներ Հայոց Եկեղեցին, երեւի թե մեզ այդպես էլ չհասնեին ո՛չ Հայկի ու Բելի պատմությունը, ո՛չ Տիգրան Մեծի նվաճումների քարտեզը, որոնցով սիրում ենք հագուրդ տալ մեր սնապարծությանը:

Լուսավորչի ու Տրդատ Մեծի, Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթեւի, Վարդան Մամիկոնյանի ու Ղեւոնդ Երեցի, մեր սրբանուն եւ հաճախ նաեւ անանուն եկեղեցանվեր ու քրիստոսասեր քերթողահայրերի, ճարտարապետների, մանրանկարիչների, երգահան-երաժիշտների կողքին իր հաստատուն ու անջնջելի տեղն ունի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեկ այլ նվիրյալ՝ Կոմիտաս վարդապետ Սողոմոնյանը՝ Կոմիտասը:



Այսօր ոմանց, նույնիսկ մերօրյա քաղաքագետներից շատերին գուցե անհեթեթ թվա նման համեմատությունը. ի՞նչ կապ ունի երգն ու երաժշտությունը քաղաքագետի ու քաղաքականության հետ: Սակայն մեր պատմությունը բազմիցս է փաստել, որ օրապահիկ քաղաքական շատ ու շատ քայլեր հեռանկարում ոչինչ չեն տվել ազգին, որով նա կարողանար իրապես հպարտանալ, էլ չենք ասում՝ հաստատապես շարունակել իր պատմական առաքելությունը դարերի հոլովույթում: Ո՞վ կարող է ժխտել, որ մեր «քաղաքական» հիմնարար ձեռքբերումները, մեր ինքնության անմերժելի ու հաստատուն կռվաններն առավելապես, եթե չասենք՝ ընդհանրապես, եղել են հոգեւոր-մշակութային ոլորտում եւ ծրագրվել ու հովանավորվել նույն կառույցի, այն է՝ Եկեղեցու կողմից՝ մշտապես փաստելով այն ճշմարտությունը, որ առանց հոգեւոր ու մշակութային կայուն արժեքների՝ որեւէ ազգ չի կարող ներկայանալ աշխարհին ու շարունակել իր կենսագրությունը:

Եվ մշակույթի այնպիսի մի հզոր օղակ, ինչպիսին երգ-երաժշտությունն է, չի կարող բախտորոշ դեր չխաղալ ազգի ու երկրի գոյատեւման հարցում, քանզի երաժշտությունը մարդու հոգեւոր ու բարոյական կերտվածքի ամենահինագույն ու ամենանախնական արտահայտչամիջոցներից մեկն է, որին ամենից շատ է հաջողվում անհատի եւ հանրության հոգու եւ մտքի վրա գերազդել, ուստի նաեւ գերնվաճել: Եվ այդ «գեր»-ը անպատճառ ու անպայման պետք է առանձնական լինի, գենետիկորեն միայն ու միայն տվյալ էթնոսին բնորոշ, միայն նրան վերապահվող: Եվ հենց այս գիտակցությամբ ու բոլոր հանճարներին տրված ենթագիտակցորեն՝ մոտալուտ վտանգին, արհավիրքին զենքից ավելի զորեղ «զենքով» դիմագրավելու անզուսպ պահանջն էր, որ ստիպեց 26-ամյա Կոմիտաս վարդապետին վանքի պատերի ներքո սաղմոսներ կարդալու, աստվածաբանական ու դավանաբանական աշխատություններ գրելու եւ ուսումնասիրելու փոխարեն ընտրել երգը, այն էլ՝ աշխարհիկ երգը: Դեռեւս ժամանակին հենց այդ աշխարհիկ՝ շինականի ու գեղջկուհու, ժողովրդի ծոցից ելած գուսանների ու աշուղների երգն ու տաղն էր, որ անցավ քրիստոնեության ոգու ոսկե գալարներով ու դարձավ հոգեւոր երգ ու անզուգական շարական, դարձավ պատարագչի շուրթերից հնչող աստվածահաճո աղոթք եւ պահպանեց իր շունչն ու շնչառությունը:

Իսկ բուն այդ երգը դարերի մեջ, զանազան անհարազատ ու օտարամուտ փոխազդեցություններից, արդեն վտանգված էր: Պետք էր մի հանճարեղ անհատ, սահակպարթեւյան ու մաշտոցյան հեռատես միտք ու կամք, որ ջանար որոնել, փնտրել դարերի խորքից եկող հոգեւոր երաժշտության, անտունիների, շինական, ծիսական, քնարական, էպիկական շնչի երգերի արմատներում թաքնված այն հարազատ ու մաքրաշունչ հիմնաթելերը, որոնց պաստառի վրա կարելի լիներ ոսկերչական հմտությամբ վերականգնել կորցրածը: «Ուր զենքը չի տիրում, երգն է գերում». սա քաջ գիտեր վարդապետը, քանզի առկա աղավաղված ու «հիվանդ» երգը համարյա գերել էր ժողովրդին. եկեղեցու պատերից դուրս հայ մարդը երգում էր թուրքերեն ու քրդերեն, օտարաշունչ ու օտարաձայն (այսօր, ցավոք, նույնն է կատարվում եւ դեռ ավելին), իսկ ուսյալ այրերի մի մասը, ազգային արմատներից անտեղյակ, քաղաքակրթության համատարած արահետներով տուն էր բերում եվրոպականացված (այսօր նաեւ ամերիկյան ու Աստված գիտի՝ ինչական) հովեր, որոնք ոչ պակաս էին վտանգավոր: Հազարամյակներ մշակույթ ստեղծող ժողովուրդն աշխարհիկ երգի առումով կանգնած էր գրեթե ձեռնունայն: Օտարն ու օտարածինն այնպես էր տարածվել ու ծլարձակել, որ եղածն ու պահպանվածն էլ օր օրի խեղդվում էր: Այս վտանգի գիտակցությունն ուներ նաեւ Հայոց Հայրապետը՝ Խրիմյան Հայրիկը: Պակաս ջանքեր չթափեց Հայրապետը նավթարդյունաբերող, մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշովին համոզելու՝ օժանդակել Կոմիտասին Եվրոպայում հիմնավոր երաժշտական կրթություն ու գիտելիքներ ստանալու համար:

Եվ Կոմիտասը մեկնեց Բեռլին: Հանրահռչակ Մ. Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում, ուր իրենց բախտը կարող էին փորձել միայն բացառիկ ընդունակություններ ունեցողները, Կոմիտասն ուսումնասիրում է կոմպոզիցիայի տեսություն, երաժշտության պատմություն, մշակում ձայնը, սովորում դաշնամուր, երգեհոն, խմբավարություն, այդ ընթացքում հայ երաժշտության



մասին կարդալով երկու փայլուն դասախոսություն՝ զարմանք ու հիացմունք պատճառելով եվրոպացի բանիմաց, համաեվրոպական երաժշտության պատմությանն ու ակունքներին քաջատեղյակ մասնագետներին ու ունկնդիրներին: Դա, թերեւս, վերակենդանացած հայ աշխարհիկ երգի առաջին շողն էր, որ հետո պիտի «քելեր, ցոլեր» տնից տուն, շուրթից շուրթ ու հնչեր համայն աշխարհում՝ որպես անխառն, զտահունչ հայեցի երգ:

Տուն վերադառնալով՝ Կոմիտասը լծվեց իր փորձն ու գիտելիքները սաներին հաղորդելու հույժ կարեւոր գործին՝ միաժամանակ շարունակելով որոնումներն ու ուսումնասիրությունները: Բազում այլ գործերի հետ (ինքնուրույն ստեղծագործություններ, «Պատարագի» մշակում, խազերի ուսումնասիրում, տեսական աշխատություններ) նա ձեռնամուխ եղավ հայ գեղջկական երգերի հավաքմանն ու մշակմանը՝ դարեր անց հային վերադարձնելով ազգային ինքնության հզոր կռվաններից մեկը՝ հայ երգը:

Եվ ահա այսպես, շնորհիվ Հայ Եկեղեցու վարդապետ, մեծ երաժիշտ, իիրավի «քաղաքագետ» Կոմիտասի՝ հայն ունեցավ ինքնուրույն երաժշտություն, ազգային կոմպոզիտորական դպրոց:

Իսկ այսօր մենք՝ Կոմիտասի զավակներս, խնդիր ունենք՝ թույլ չտալ, որ դարեր անց հարկ լինի նոր կոմիտասներ փնտրելու, որ հայ երգը կրկին պեղի օտարների ճահիճների ու մացառների միջից: Եվ ո՞վ գիտի՝ կկարողանա՞ արդյոք:

*Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ*

---

# Եկեղեցին եւ ցեղասպանության ճանաչումը

*Սկիզբը՝ էջ 3*

**Սիրտ պաղեցնող լուրերից վշտահար՝ միաժամանակ հեռագրում եմ չեզոք երկրներին, Միացյալ Նահանգների նախագահին, Իտալիայի թագավորին՝ կոտորվող խաղաղ բնակչությանը պաշտպանելու խնդրանքով»:**

Պողոս Նուբար փաշան, որ մինչ այդ եվրոպական երկրներում կաթողիկոսի լիազորությամբ պաշտպանում էր հայկական դատը, այժմ «Տաճկական կառավարության ձեռքով կազմակերպված գազանությանց դեմ բողոքելու նպատակով», որպես կաթողիկոսի ներկայացուցիչ եւ ազգային պատվիրակության նախագահ, մեկնում է Փարիզ, Լոնդոն:

**«...ես մեծ հույսով ու հավատով սկսեցի այս գործը,- գրում է կաթողիկոսը,- եւ հավատում եմ, որ վերջապես լսելի կլինի եւ կհարգվի դարավոր հայ եկեղեցյաց Պետի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի արդարացի խնդիրը քաղաքակիրթ պետությանց կողմից: Լիահույս եմ, որ Դուք Ձեր բարոյական ազդեցությամբ, փորձառությամբ ու հեռատեսությամբ կաշխատեք եւ հաջող կտանեք տաճկահայ ժողովրդի արդարացի դատը»:**



Կաթողիկոսը Պողոս Նուբար փաշայի հետ նամակագրական կապի մեջ էր, հանձնարարականներ էր տալիս, թե ինչպես գործի, ում հանդիպի, որպեսզի աշխարհի ուշադրությունը սեւեռվի հայկական հարցի վրա:

1915 թվականի հուլիսի 19-ի նամակում Ամենայն Հայոց Գեւորգ Ե կաթողիկոսը Պողոս Նուբար փաշային գրում է **«...Միանգամայն անհրաժեշտ է այժմյանից նախապատրաստել Ֆրանսիայի եւ Անգլիայի պետական մարդոց, քաղաքական գործիչերին եւ ազդեցիկ մամուլի ներկայացուցիչներին հօգուտ Տաճկա-Հայաստանի ինքնավարության: Մեկ այլ կարեւոր խնդիր եւս կա՝ բողոքել չեզոք պետությանց առաջ (գլխավորապես Միացյալ Նահանգների եւ Բուլղարիայի, որոնց դեսպանները որոշ չափով պաշտպանություն ցույց կտան հայերին) բարբարոս տաճիկ կառավարության այն սոսկալի խժդժությանց եւ դժոխային ծրագրի առթիվ, որ կգործ դնե վերջերս Հայաստանում եւ Կիլիկիայում»:**

1920 թ. մարտին Խորեն Մուրադբեկյանը Լոնդոնից գրում է կաթողիկոսին.

**«Հայաստանի հարցը եւ բախտը այժմ վճռվում է Անգլիայում: Խոսել եմ մեծ հայասերներ Ջեյմս Բրայսի եւ Վիլիամսի հետ, եւ խնդրեցին հայտնել Ձեզ, որ իրենք անչափ գոհ եւ հպարտ են զգում Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուշադրությունից: Եվ պատրաստ են միշտ կատարելու Ձեր՝ Վեհափառ Հայրապետիդ հրամանները եւ ծառայելու, մանավանդ, ինչպես ասացին, որ սիրում են հայ ժողովրդին, գիտեն նրա պատմությունը, վիճակը, ընդունակությունը եւ հավատում են նրա լավագույն ապագային: Հայտնեցեք Վեհին, որ քանի կենդանի ենք՝ պետք է աշխատենք օգտակար լինել նրա հոտին»:**

Սակայն արդարություն որոնողները հերթական անգամ հուսախաբ են լինում:

## Վերապրումի տարիներ

Պատմական հայրենիքից տարագրված հայությունն իր ազգային-հոգեւոր ինքնությունը պահպանելու համար Սփյուռքում համախմբվեց Եկեղեցու շուրջ, վերականգնեց իր եկեղեցական-կրթական կառույցները: Հայ Առաքելական Եկեղեցին, ինչպես բոլոր ժամանակներում, ստանձնեց հոտն առաջնորդելու իր պատմական առաքելությունը:

**«Եկեղեցին փորձեց հայահավաքություն կազմակերպել, ցրված հայությանը հավաքել, քովքովի բերել: Տիրություն անելը դարձավ եկեղեցու թիվ մեկ առաքելությունը: Հայահավաքության այս գործը եթե չկազմակերպվեր, մարդկային շատ կորուստներ պիտի ունենայինք»,- ասում է Տաթեւ արք. Սարգսյանը:**

1931 թվականին Դեր Զորում, ուր զոհվել էր 200 հազար հայ գաղթական, որպես հիշատակի անմոռաց կոթող, որպես աղոթքի տուն՝ կառուցվեց եկեղեցի: 5 տարի անց եկեղեցու կողքին կանգնեցվեց հուշարձան, ուր ամփոփվեցին նահատակների մասունքոսկորները: Ավելի ուշ՝ 1990 թվականին, կառուցվեց Սուրբ նահատակաց եկեղեցին:

Տարբեր երկրներում ապաստան գտած հայությունը եկեղեցական իր կառույցների միջոցով բողոքի ձայն էր հնչեցնում եւ պահանջում, որ աշխարհը դատապարտի 1915 թվականի ոճրագործությունը:

Խորհրդային Հայաստանում ցեղասպանության մասին խոսքն ընկալվում էր որպես «հայկական ազգայնամոլության» քարոզ ու արգելվում:

*Շարունակելի*

*Ալվարդ ՆԱԶԱՐՅԱՆ*

# ԴԱՌՆԱՆՔ ԴԵՊԻ ԱՍՏՎԱԾ

**«Երկինքը պատմում է Աստծու փառքը, եւ երկնքի հաստատությունը հայտնում է Նրա ձեռքի գործերը»** *(Սղմ. ԺԸ 2)*

Մեծ են աստվածային գործերն ու հրաշալիքները. ո՛չ միտքը կարող է խորհել, եւ ո՛չ լեզուն՝ ճառել: Արարիչ Աստված, Իր անհուն սիրուց մղված, ստեղծեց համայն աշխարհն ու տիեզերքը՝ արարչագործության թագ ու պսակ հանդիսացող մարդ էակի համար՝ Իր պատկերով եւ նմանությամբ, որպեսզի վերջինս վայելի այն՝ փառաբանելու իր Արարչի անքննելի մեծությունը: Սակայն առաջին մարդկանց անկման արդյունքում, երբ մեղքն աշխարհ մտավ, մեղքի հետ նաեւ՝ մահը, խաթարվեց Աստծու եւ մարդու միջեւ ներդաշնակ հարաբերությունը: Զրկվելով երանավետ դրախտից՝ մարդը ժառանգեց փուշ ու տատասկ աճեցնող երկիրը, սակայն չկորցրեց այն վերագտնելու հույսը: Քրիստոսով անկյալ մարդկությունը վերստին արժանացավ կորուսյալ դրախտ վերադառնալուն, միայն թե մարդկության պատմությունը ցույց է տալիս, որ բոլոր ժամանակներում էլ եղել են Աստծուն եւ արարչագործության աստվածային ծագումը մերժողներ, ովքեր ոչ միայն մերժում են իրենց կյանք պարգեւած Աստծու գոյությունը, այլեւ չեն կարողանում (կամ պարզապես չեն ցանկանում) տեսնել միակ Աստծու սքանչելիքներն անպատմելի արարչագործության մեջ: Ցավալիորեն պիտի նկատենք, որ այսօր էլ մեր կողքին ապրում են մարդիկ, որոնց անմահ հոգիներում անաստվածության, աստվածմերժության տարիներն իրենց խոր հետքն են թողել: Ցավոք, այդ մարդիկ չեն հավատում Աստծու գոյությանը, չեն ցանկանում տեսնել Աստծու լույսը, աստվածային սքանչելիքները, արարչության վեհությունն ու կատարելությունը, չեն ցանկանում տեսանելիի, ժամանակավորի միջոցով տեսնել անտեսանելին ու հավիտենականը: Ս. Պողոս առաքյալը հստակ ասում է. «Արդարեւ են ի սկզբանե աշխարհի Աստծու աներեւույթ հատկությունները, այն է՝ Նրա մշտնջենավորությունը եւ զորությունը եւ աստվածությունը, իմանալի կերպով տեսանելի են Նրա  ստեղծածների մեջ» (Հռոմ. Ա 20), այսինքն՝ Աստծու ստեղծագործության՝ արարչագործության միջոցով ցանկացողը կարող է տեսնել Արարչին: Աստծուն մերժող մարդկանցից ո՞վ երբեւէ չի սքանչացել բնության՝ տարվա յուրաքանչյուր եղանակին բնորոշ գեղեցկությամբ, ո՞վ երբեւէ չի հիացել աստղազարդ երկնքին նայելով՝ չկարողանալով աչքը կտրել անհուն ու անծայրածիր խորհրդավոր տիեզերքից, ո՞վ երբեւէ չի խորհրդածել այս ամենի ներդաշնակության ու անկրկնելիության մասին... Ս. Գիրքն է տալիս բոլոր հարցերի սպառիչ պատասխանները. «Տէր Աստված վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը եւ կարգավորեց դրանք» (տե՛ս Ծննդ. Բ 1), ստեղծեց կատարյալ ու ներդաշնակ. «Ոչ մի բան Նա չի ստեղծել թերի» (Սիրաք ԽԲ 25): Տիրոջ Խոսքով ստեղծվեց ամեն ինչ. Նա հրամայեց, եւ դրանք ստեղծվեցին: Ո՞վ կարող է ոչնչից ստեղծել այս զարմանահրաշ, կատարյալ աշխարհը, եթե ոչ հավիտենական Աստված, Ով «ոչնչի շուրջը փռեց երկինքը, կախեց երկիրը ոչնչի վրա» (Հոբ ԻԶ 7): Բարուքն իր թղթում աստվածային ամենակարողության գովքն է անում՝ ասելով. «Նա, ով լույսն է ուղարկում, եւ լույսը գնում է, հետ է կանչում, եւ լույսը դողալով հնազանդվում է Նրան... Նա կանչում է աստղերին, ու նրանք ասում են՝ «Այստեղ ենք», եւ զվարթորեն ճառագում են իրենց Արարչի համար: Դա մեր Աստվածն է, որի հետ ոչ ոք չի կարող համեմատվել...» (Բարուք Գ 33-36): Մարդկության պատմության ընթացքը ցույց է տվել, որ իրենց անհավատ կամ անուղղելի աթեիստ համարող շատ մարդիկ, ի վերջո, հանգել են այն անհերքելի ճշմարտությանը, որ տիեզերքը կառավարում է միակ եւ ճշմարիտ Աստված, Ով սկիզբն ու պատճառն է ամեն ինչի, եւ Ում ձեռքին են ամեն մարդ էակի հոգին ու կենդանի շունչը (տե՛ս Հոբ ԺԲ 10): Բազում տվայտանքներից ու Բարձրյալի դեմ պայքարելուց» հոգնած՝ նրանք խոնարհվել են Նրա առջեւ՝ Հոբ երանելու հետ խոստովանելով. «Ոչնչություն եմ, ի՞նչ պատասխան պիտի տամ ես... միայն պիտի պապանձվեմ» (Լծ 34): Ս. Գիրքը խստիվ զգուշացնում է, որ ամենեւին արդարանալ չեն կարող նրանք, ովքեր արարչագործության միջոցով թեեւ ճանաչեցին Աստծուն, բայց իբրեւ Աստված չփառավորեցին կամ գոհություն չմատուցեցին Նրան, այլ իրենց ազատ կամքով մերժեցին միակ Աստծուն՝ տիեզերքի Ճարտարապետին, չէ՞ որ «արարվածների մեծությունից ու գեղեցկությունից՝ նույն համեմատությամբ էլ երեւում է դրանք Արարչագործողը» (Սող. ԺԳ 5): Հավատի աչքերով նայելով Աստծու անպատմելի արարչությանը՝ ամեն մի թփի, ծաղկի մեջ կտեսնենք Աստծուն, կզգանք Աստծու շունչը եւ կփառաբանենք տիեզերքի Արարչին, որովհետեւ ողջ աշխարհը վիթխարի վկան է Տիրոջ գոյության եւ ամենակարողության: Մինչեւ իսկ հեթանոս աշխարհի իմաստասերները (օրինակ՝ Պլատոնը, Արիստոտելը եւ ուրիշներ), բանական ու բարոյական մտածողությամբ հաստատում էին Աստծո գոյության ճշմարտությունը: Ս. Գիրքն ուսուցանում է, որ Աստծու գաղափարը, աստվածային օրենքի պահանջներն ու բարոյականությունը գրված են մարդկանց սրտերում (տե՛ս Հռոմ. Բ 14-15): Ուրեմն մարդը չի կարող ամբողջապես մոռացության տալ Աստծու անունը, կուրորեն ժխտել ու մերժել Աստծու գոյության փաստը, քանի որ սիրտը կբողոքի, ու խիղճն իր ձայնը կբարձրացնի: Մեր Եկեղեցու մեծագույն աստվածաբաններից Արշակ Տեր-Միքելյանն ասում է. «Ինչպես որ աչքը կարիք է զգում լույս տեսնելու, այնպես էլ մարդու հոգու բնական անհրաժեշտությունն է հաղորդ լինել հավիտենական ճշմարտության լույսին: Աստվածճանաչողությունն է մարդու կյանքը»: Մարդը հոգեւոր էակ է, հոգուց եւ մարմնից է բաղկացած. որքան էլ մարմինը, երկրաքարշ ցանկություններով, ձգում է մարդուն վար, կապում երկրին, թելադրում իր օրենքները, հոգին ձգտում է վեր, դեպի աստվածայինն ու անիմանալին, դեպի հավիտենականն ու հոգեւորը: Անմահ հոգի ունեցող մարդն ստեղծված է հավիտենության համար, իսկ այս ժամանակավոր կյանքը միջոց եւ ճանապարհ է՝ հավիտենական, անանց կյանքը, երկնքի արքայությունը շահելու համար: Մինչդեռ Աստծուն մերժողի համար արժեք չունեն այս խոսքերը, որովհետեւ նրանք ապրում են միայն այս կյանքի համար, վայելում Աստծու տված բարիքներն ու երկրի գեղեցկությունը՝ ամենեւին չմտածելով, որ այն արտացոլումն է երկնի մշտնջենական գեղեցկության, որը վախճան չի ունենալու:





*Շարունակությունը՝ էջ 8*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՊՈՂՈՍ Բ ԳԱՌՆԵՑԻ

## (1418-1430)

*Սկիզբը՝ էջ 3*

Պողոս կաթողիկոսը, հաստատվելով Սսի հայրապետական աթոռին, Երուսաղեմի պատրիարք կարգեց Մարտիրոս Եգիպտացի եպիսկոպոսին: Եգիպտոսում գահակալող Բուրսբեյ Աշրաֆ սուլթանը մեզ անհայտ պատճառով կարգադրում է Սբ Հարության տաճարի դռները փակել քրիստոնյաների առաջ եւ  արգելել վերջիններիս մորուք կրել: Հայտնի է, որ մինչեւ վերջերս էլ Սբ Հարության տաճարի դուռը հանձնված էր արաբների պահպանությանը, իսկ քրիստոնյա դռնապանները, որոնք հայտնի էին իքինջի անունով, օգնականներ էին միայն ու երկրորդական դեր ունեին (Իսրայելի վերահսկողության տակ այդ տարածքի անցնելուց հետո փոփոխություն եղել է թե ոչ, մեզ հայտնի չէ: Թերեւս եղել է): Այս կարգադրությունը բոլորովին դուր չեկավ Հաբեշստանի թագավորին, որի անունն էր Իսահակ: Նա կարգադրեց իր տերության մեջ գտնվող այլազգիներին կոտորել: Դրան ի պատասխան՝ Բուրսբեյ սուլթանն էլ փորձեց կոտորել Պաղեստինի եւ Եգիպտոսի քրիստոնյաներին: Դա տեղի չունեցավ միայն երկրի ավագանու ճնշման ներքո: Ավագանին կարողացավ հասնել այն բանին, որ սուլթանը ետ վերցրեց իր հրամանը: Այսուհանդերձ Երուսաղեմում Սբ Հարության տաճարը երկու տարի՝ 1424-1426 թթ., փակ մնաց: Հետո համեմատաբար խաղաղ կացություն ստեղծվեց, եւ Մարտիրոս պատրիարքը ձեռնարկեց շինարարական գործունեության: Պատրիարքը, տարիքի պատճառով, 1430-ին աթոռակից դարձրեց Եսայի եպիսկոպոսին, որն զբաղվում էր ներքին վարչությամբ: 1431-ին վրացիները կարողացել էին Գողգոթայի սրբավայրերն իրենց ձեռքն առնել: Մարտիրոս պատրիարքը Կիպրոս գնաց եւ երեք տարվա համառ ջանքերի, դրամ ծախսելու գնով 1436-ին վերականգնեց հայերի իրավունքը Գողգոթայի սրբավայրի նկատմամբ:

Խոսելով այլեւայլ խնդիրների մասին՝ մենք կարծես թե ուշադրությունից դուրս թողեցինք Պողոս կաթողիկոսին:

Կիլիկիայի մեծ գաղթականությունից հետո, ընդհանուր առմամբ, խաղաղ շրջան սկսվեց Կիլիկիայում: Սակայն դրա փոխարեն ներքին խլրտումներ եղան հայրապետանոցում: Նորից սկսեց գլուխ բարձրացնել աղթարմայությունը, որը վաղուց էր բույն դրել այնտեղ: Բայց դրան զուգահեռ զգացվում էր վանականների պաշտոններ զբաղեցնելու շահագրգռությունը: Ի վերջո, նա դարձավ Սսի վեց կաթողիկոսներից մեկը, որին միաբանները թունավորեցին: Առանց գիտակցելու՝ հայրապետանոցի միաբաններն



իրենց այդ խայտառակ արարքով լոկ արագացրին կաթողիկոսական աթոռը Էջմիածին տեղափոխելու խնդիրը: Աղթարմայությունը գլուխ բարձրացրեց կրկին: Աթոռն անմիջապես Էջմիածին տեղափոխելը հնարավոր չէր, քանի որ բուն Հայաստանը գտնվում էր քաղաքական ծանր կացության մեջ: Սակայն արեւելյան եպիսկոպոսներն արդեն վճռականորեն որոշել էին հարվածել Հայոց Եկեղեցում գնալով արմատավորվող աղթարմայությանը՝ հայրապետանոցը Սբ Էջմիածին տեղափոխելու միջոցով:

Պողոս կաթողիկոսը մահացավ 1430 թվականին:

***ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

ՏԻԽՈՆ ԶԱԴՈՆՍԿԻ

# ՄԱՐՄԻՆ ԵՎ ՀՈԳԻ

(մասնակի կրճատումներով)



Սկիզբը՝ թիվ 2

## Մեղքը

«Ամեն ոք, որ մեղք է գործում, մեղքին ծառա է» (Հովհ. Ը 34)

«Մեղքը հասունանալով՝ մահ է ծնում» (Հակոբոս Ա 15)

«Ամեն ոք, ով բնակվում է Նրա մեջ, չի մեղանչում. եւ ամեն ոք, ով մեղանչում է, ո՛չ տեսել է Նրան եւ ո՛չ էլ ճանաչել» (Ա Հովհ. Գ 6)

«Ով մեղք է գործում, այդ՝ սատանայից է, քանի որ սատանան մեղավոր է ի սկզբանե» (Ա Հովհ. Գ 8)

«Ամեն ոք, ով Աստծուց է ծնված, մեղք չի գործում, որովհետեւ Նրա սերմը մնում է նրա մեջ. չի էլ կարող մեղանչել, որովհետեւ Աստծուց է ծնված» (Ա Հովհ. Գ 9)

«Այսուհետեւ մեղքը թող չթագավորի ձեր մահկանացու մարմիններին՝ հնազանդեցնելու ձեզ իր ցանկություններին» (Հռոմ. Զ 12)

«Մեղքը ձեզ չպետք է տիրի» (Հռոմ. Զ 14)

«Մեղքի վարձը մահն է» (Հռոմ. Զ 23)

## Դատողություններ մեղքի մասին

Ի՞նչ է մեղքը, եւ ինչո՞ւ է այն մեծ չարիք. բերենք պատճառները:

**Առաջին.** Ամեն մի մեղքով, որ թույլ ենք տալիս, վիրավորում ենք Աստծո մեծությունը:

**Երկրորդ.** Այն մարդը, ով մեղք է գործում, ավելի է նախընտրում իր կրքերն ու հեշտանքները, քան Աստծո օրենքը, այդ իսկ պատճառով էլ զայրացնում է անսկիզբ ու անսահման, ամենաբարի, ամենաարդար ու հավիտենական Աստծուն: Թե դա ինչ ծանր բան է, ամենքին է տեսանելի:

**Երրորդ.** Մե՛զ մեղքերից ազատելու համար էր, որ Աստծո Որդին աշխարհ եկավ եւ ինչպիսի՛ չարչարանքներ տարավ, ինչպիսի՛ մահ ընդունեց: «Աստծո Որդին հենց նրա համար հայտնվեց, որ քանդի սատանայի գործերը» (Ա Հովհ. Գ 8):

**Չորրորդ.** Մեղքը մարդուն բաժանում է Աստծուց եւ զրկում աստվածային շնորհներից: Այդ պատճառով էլ Աստված մարդուն ասաց. «Ահա ձեր տունը ավերակ կթողնվի ձեզ» (Մատթ. ԻԳ 38):

**Հինգերորդ.** Աստծուց եւ Նրա շնորհներից զրկված հոգին մեռնում է՝ համաձայն Սուրբ Գրքի. «Ով մեղանչի, նա էլ պիտի մեռնի» (Եզեկ. ԺԸ 4): Երբ մեռնում է մարմինը, հոգին նրան լքում է, ճիշտ այդպես էլ, երբ Աստված լքում է այդ հոգուն, այն մեռնում է: Վայ այն հոգուն, որ զրկվում է Աստծուց, քանզի նրան կտիրի սատանան, եւ նա կենթարկվի ամեն տեսակ փորձանքի:

**Վեցերորդ.** Մեղք գործողին անընդհատ տանջում է խիղճը, որն ուզածդ դժբախտությունից ծանր է. նրանում ապրում է այն ներքին վախը, որ ուներ Կայենը:

**Յոթերորդ.** Մեղքի համար լինում են նաեւ ժամանակավոր պատիժներ՝ սով, հրդեհներ, պատերազմներ, հիվանդություններ, երկրաշարժեր եւ այլն: «Մահն ու հակառակությունը, արյունն ու սուրը, հարվածներն ու սովը, կործանումն ու տանջանքը, այս բոլորը ստեղծվել են մեղավորների համար» (Սիրաք Խ 9):

## Մեղքից խուսափելու ձեռնարկներ

**Առաջին.** Անկեղծ, խոնարհամիտ, ջանադիր ու ապաշխարող սրտով աղոթի՛ր: «Արթո՛ւն մնացեք եւ աղո՛թք արեք, որպեսզի փորձության մեջ չընկնեք»,- ասում է Քրիստոսը (Մատթ. ԻԶ 41):

**Երկրորդ.** Մահվան մասին հիշի՛ր. «Քո բոլոր գործերի մեջ հիշի՛ր վախճանդ եւ չես մեղանչի երբեք» (Սիրաք Է 39): Մահն է կանխորոշում Քրիստոսի դատաստանը. կա՛մ հավիտենական տանջանքների կդատապարտվես, կա՛մ էլ՝ հավիտենական երանության: Ունենալ հավատի այն հերոսությունը, որը Քրիստոսին տարավ մահվան եւ մեռյալներից հարություն տվեց: Հենց Նրա միջոցով կարող ես մեղքի դեմ գործել եւ մտնել հավիտենական երանություն, իսկ մեղքի դիմաց կվաստակես հավիտենական տանջանքներ:

**Երրորդ.** Խուսափի՛ր այն առիթներից, որոնք կարող են մղել մեղք գործելուն. լեզուն, լսողությունը, տեսողությունը պետք է պահպանել գայթակղություններից:

**Չորրորդ.** Խուսափի՛ր ամենափոքր մեղքերից, քանզի փոքրից է սկսվում մեծը:

**Հինգերորդ.** Հիշի՛ր, որ մեղքը ժամանակավոր հաճույք է. նրան հաջորդում են հավիտենական տանջանքները:

**Վեցերորդ.** Միշտ Աստծուն աչքիդ առաջ ունեցի՛ր, խորհիր, որ Նա ամենուրեք է, ամեն բան տեսնում է եւ յուրաքանչյուրին կհատուցի ըստ նրա գործերի: Նա կարող է մեղսագործին հենց նույն պահին ապշեցնել Իր արդար դատով:

**Յոթերորդ.** Հիշողությունդ թարմացրու այն դատաստաններով, որ հատուցվել են անցյալի մեղքերի դիմաց՝ համաշխարհային սարսափելի ջրհեղեղը, Սոդոմը եւ Գոմորը, իսրայելացիների պատուհասվելը անապատում եւ այլն:

**Ութերորդ.** Մտորի՛ր, որ հենց մեր մեղքերի համար Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոսը, չարչարվեց ու մահվան դատապարտվեց: Արժե՞ անել այն, ինչի համար Քրիստոսն այդքան չարչարանքներ տարավ, եւ չլինի՝ մեր մեղքերով վերստին խաչ հանենք Աստծո Որդուն (տե՛ս Եբրայեց. Զ 6): Դա սարսափելի է եւ արգահատելի:

**Իններորդ.** Նայիր մեր օրերի Աստծո դատաստաններին, որոնք տեղի են ունենում մեր մեղքերի պատճառով:

**Տասներորդ.** Հաճախակի եւ հնազանդ հոգով կարդա՛ կամ լսիր Աստծո Խոսքը եւ եղի՛ր ուշիմ:

**Տասնմեկերորդ.** Մի՛ նայիր, թե ինչ են անում մարդիկ, այլ սովորիր Աստծո օրենքն ու Եկեղեցում քարոզվածը:

**Տասներկուերորդ.** Ընթերցի՛ր սրբերի վարքը եւ ընդօրինակի՛ր նրանց:

## Չարություն

«Ինչո՞ւ է հզորը պարծենում չարությամբ ու անօրենությամբ: Գիշեր-ցերեկ նա անիրավություն նյութեց իր լեզվով, սուր ածելու նման նենգություն գործեց: Բարությունից ավելի չարություն սիրեց եւ արդար խոսքից ավելի՝ անօրենությունը: Սիրեց նա ամեն տեսակ կործանարար խոսքեր եւ նենգ լեզուներ: Դրա համար Աստված կկործանի նրան իսպառ, կխլի ու կհանի նրան իր օթեւանից, եւ նրա արմատները՝ ողջերի երկրից: Արդարները կտեսնեն ու կվախենան եւ կծաղրեն նրան՝ ասելով. «Սա է այն մարդը, որ Աստծո օգնությանը չապավինեց, այլ հույսը դրեց իր մեծ հարստության վրա եւ զորացավ իր ունայնությամբ» (Սաղմոս ԾԱ 3-9):

«Նա փոս փորեց, խորացրեց, հենց ինքն էլ ընկավ այն փոսը, որ նա պատրաստեց: Նրա գլխին կթափվեն իր չարագործությունները, նրա գագաթին կիջնեն իր անօրենությունները» (Սաղմոս Է 16-17):

«Որոգայթ պատրաստեցին ոտքերիս համար, ընկճեցին ինձ, առջեւս փոս փորեցին, բայց նրա մեջ իրե՛նք ընկան» (Սաղմոս ԾԶ 7):

«Երբ չարագործ նեղիչներս եւ թշնամիներս մոտեցան ինձ՝ մարմինս ուտելու, նրանք թուլացան ու ընկան» (Սաղմոս ԻԶ 2):

*Շարունակելի*

*Թարգմանությունը՝ Ռ. ԱՐՈՅԱՆԻ*

# ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՏՈՆԸ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

Փետրվարի 7-ին Հայ Առաքելական Եկեղեցին նշեց մեր ժողովրդի կողմից խիստ սիրված եւ մեծ ժողովրդականություն վայելող սրբերից մեկի՝ սիրո եւ բարի իղձերի հովանավոր՝ սուրբ Սարգիս զորավարի տոնը, որը նշանավորվում է նաեւ որպես Երիտասարդների օրհնության օր:

Գուգարաց թեմի սուրբ Սարգսի անունը կրող բոլոր եկեղեցիներում մատուցվեց պատարագ, որին հաջորդեց երիտասարդների օրհնության կարգը: Վանաձորի Սուրբ Սարգիս եկեղեցին լի էր երիտասարդներով, ովքեր եկել էին իրենց աղոթքը բարձրացնելու առ Աստված եւ խնդրելու արագահաս սրբի բարեխոսությունը՝ իրենց նվիրական իղձերի ու երազանքների իրականացման համար:

Հավարտ պատարագի՝ երիտասարդներն արժանացան Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպս Չուլջյանի օրհնությանը:

Այս օրը Սուրբ Սարգիս եկեղեցու ուխտի օրն է նաեւ, եւ այդ առթիվ պատարագի ավարտին եկեղեցու խաչքավոր Փափագ Ալոյանի կողմից բաժանվեց ուխտի մատաղ: Օրն ավելի տոնական դարձավ, երբ եկեղեցու բակում ոստիկանության աշխատակիցները, հովանավորությամբ ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ, գնդապետ Ա. Համբարյանի, երիտասարդներին նվիրեցին սեր եւ փոխադարձ հարգանք խորհրդանշող ծաղիկներ: Գնդապետ Համբարյանի կողմից ծաղիկներ բաժանվեցին նաեւ Լոռվա մարզի բոլոր եկեղեցիներում եւ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում:

Պատարագից հետո երիտասարդներն ուղեւորվեցին դեպի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցի, ուր ՎՊՄԻ-ի մանկավարժական ֆակուլտետի ուսանողների եւ թեմի Երիտասարդաց միության անդամների համատեղ ջանքերով կազմակերպվել էր տոնական հանդիսություն:

Միջոցառմանը բացման խոսքով ելույթ ունեցավ Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգեւոր հովիվ Վահան քհն. Ազարյանը:

Հանդիսությանը թեմակալ առաջնորդն իր օրհնության խոսքն ուղղեց երիտասարդներին, շնորհավորեց եւ ի մասնավորի ասաց. «Քրիստոնեական տոները ոչ միայն կրթում են մեր միտքն ու հոգին, վարքն ու բարքը, այլեւ վեհացնում ու ազնվացնում են մեր զգացմունքները: Սուրբ Սարգսի տոնը եւս մի առիթ է երիտասարդների համար՝ դրսեւորելու իրենց ազնվագույն զգացմունքներից վեհագույնը՝ սերը... Սիրելի՛ երիտասարդներ, օրհնում եմ ձեզ, որ ձեր մեջ կրեք նախ աստվածային սերը, որը եւ կառաջնորդի ձեզ անդավաճան սիրո...»:



Միջոցառման մասնակիցները մանրամասն ներկայացրին սուրբ Սարգիս զորավարի վարքը, որն ընդմիջվում էր Սուրբ Սարգիս եկեղեցու երգչախմբի կատարումներով՝ ղեկավարությամբ Անահիտ Ճուղուրյանի: Եկեղեցու սրահում բացվել էր ցուցահանդես, որտեղ ներկայացված էին ՎՊՄԻ-ի արվեստի ամբիոնի կերպարվեստի բաժնի ուսանողների դիպլոմային աշխատանքները:

Հանդիսությանը ներկա էին դասախոսներ, ուսանողներ, բարձր դասարանների աշակերտներ, տարբեր հասարակական կազմակերպությունների եւ միությունների ներկայացուցիչներ:

*Դիվան Գուգարաց թեմի*

# Մեկօրյա կրթօջախ Գառնի գյուղում

Փետրվարի 10-ին Կոտայքի մարզի Գառնի գյուղում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, տեղի ունեցավ մեկօրյա կրթօջախի բացման արարողությունը: Դպրոցի նպատակն է երեխաներին ծանոթացնել Հայ Եկեղեցու պատմությանը, ծեսերին, եկեղեցական-ազգային տոներին:

Կրթօջախը գործելու է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքում եւ կրելու է Գեւորգ Բ Գառնեցի կաթողիկոսի անունը: Արդեն իսկ շուրջ 120 աշակերտ ցանկություն է հայտնել ուսանելու կրթօջախում:

Բացման արարողությանը ներկա էին Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպս Քարամյանը, Գառնիի հոգեւոր հովիվ Վրթանես քհն. Բադումյանը, գյուղապետ Ա. Վարդանյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակիցներ, բազմաթիվ մանկավարժներ եւ հյուրեր:

*Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն*

# ԴԱՌՆԱՆՔ ԴԵՊԻ ԱՍՏՎԱԾ

**«Երկինքը պատմում է Աստծու փառքը, եւ երկնքի հաստատությունը հայտնում է Նրա ձեռքի գործերը»** *(Սղմ. ԺԸ 2)*

*Սկիզբը՝ էջ 6*



Որքա՞ն երախտամոռ ու ապերախտ է մարդն իր Արարչի նկատմամբ, Ով չարչարվեց եւ խաչվեց ողջ մարդկության փրկության համար, հրաշափառապես հարություն առավ մեռելներից՝ մեզ հարության հույսը պարգեւելով: Հրապուրվելով ու խաբվելով աշխարհի ունայն վայելքներով ու հոգսերով՝ մերժում են եւ չեն ուզում հավատալ նաեւ Աստվածորդու երկրորդ գալստյանը, մեռելների համընդհանուր հարությանը, ահեղ եւ անաչառ դատաստանին, արդարների հավիտենական երանությանը եւ մեղավորների հավիտենական տանջանքներին: Որքա՞ն եւ մինչեւ ե՞րբ պիտի համառենք անհավատության մեջ, խեղդենք մեր խղճի ձայնը, որը, մինչեւ մեր կյանքի վերջն անդադար աղաղակելու է, որ գոյություն ունի Աստված՝ ընդունենք դա թե ոչ: Ս. Գիրքն ասում է, որ Հիսուս Քրիստոսի անունով պիտի խոնարհվի ամեն ծունկ՝ լինի թե՛ երկնավորների, թե՛ երկրավորների եւ թե՛ սանդարամետականների, եւ ամեն լեզու խոստովանի, թե Հիսուս Քրիստոս Տե՛ր է՝ ի փառս Հայր Աստծու (տե՛ս Փիլ. Բ 10-11): Ուրեմն ականջ դնենք մեր խղճմտանքին եւ այսօ՛ր խոնարհվենք տիեզերքի Արարչի առջեւ, խոստովանենք մեր ոչնչությունն ու անզորությունը, մեր «հող եւ մոխիր» լինելը Բարձրյալի առջեւ, Ով այստե՛ղ է նստած ողորմության եւ շնորհի աթոռին, իսկ այնտեղ կնստի դատաստանի աթոռին: Այստե՛ղ է ներում, իսկ այնտեղ դատապարտում է (սբ Գր. Տաթեւացի): Չկարծրացնենք մեր սրտերն Աստծու Խոսքի հանդեպ, քանզի Նա կանչում է մեզ՝ Իր արքայությանն ու փառքին արժանացնելու համար: Բացենք մեր աստվածաստեղծ հոգիները Աստծու առջեւ, փառաբանենք Նրան՝ Իր անպատում պարգեւների համար: Յուրաքանչյուր բացվող խաղաղ առավոտի հետ գոհանանք Աստծուց՝ օրը խաղաղությամբ սկսելու, զգալի լույսին մեզ հաղորդ դարձնելու համար, չէ՞ որ շատերի համար այդ առավոտն այդպես էլ չբացվեց: Յուրաքանչյուր պահը մեր կյանքում կարող է վերջինը լինել, հավերժ չենք ապրելու այս երկրի վրա, մեր հոգիների եւ մարմինների Իշխանն ամեն վայրկյան կարող է մեր հոգին մեզնից վերցնել, ինչպես ավետարանական անմիտ մեծահարուստի պարագայում եղավ (տե՛ս Ղուկ. ԺԲ 20)... Ոչինչ մերը չէ այս կյանքում: Ամեն ինչ, նաեւ մեր շունչն ու հոգին պատկանում են Նրան, Ով այն տվեց: Ուրեմն հավատանք Նրան մեր ողջ սրտով, հոգով եւ էությամբ, հավատանք առանց երկմտելու, որովհետեւ Նրա՛ ողորմությամբ ու շնորհով ենք ապրում ու վայելում այս հրաշք արարչագործությունը:

Անկեղծորեն զղջանք մեր սխալ ընթացքի համար, խոստովանությամբ եւ ապաշխարությամբ դառնանք դեպի Տերը, Ով հանապազ սպասում է յուրաքանչյուր մեղավորի դարձին եւ ապաշխարությանը: Դառնանք մեր չար ու անօրեն ընթացքից, խոստովանենք Հիսուս Քրիստոսին՝ որպես մեր միակ Տեր եւ Փրկիչ, Ում զորությամբ եւ հրամանով մի ակնթարթում մեր բյուր մեղքերի բեռից կարող ենք ազատվել, ինչպես սբ Գր. Նարեկացին է ասում իր աղոթամատյանում. «Ի՞նչ են Քո աչքում, Ո՛վ ամենակալ, բազմակույտ մեղքերն ամբողջ տիեզերքի, եթե ոչ՝ հողի դյուրափխրուն կոշտ, որ մի կարծրության բախմամբ՝ անհապաղ փոշիանալով կցնդի անհետ...» (ԲԱՆ ՀԴ Գ), միայն թե անկեղծորեն զղջանք ու խոստովանենք մեր մեղքերը: Զղջանք ահեղ տանջանքների ահով եւ անանց բարիքների փափագմամբ: «Սիրե՛նք համայն ստեղծագործությունն Աստծու, թե՛ ամբողջությունը, թե՛ յուրաքանչյուր ավազահատիկը Նրա: Սիրե՛նք Աստծու ստեղծած ամեն մի տերեւ, ամեն մի ճառագայթ: Սիրե՛նք կենդանիներին, բույսերին, սիրե՛նք ամեն բան: Սիրելով ամեն բան՝ իրերի մեջ կըմբռնենք խորհուրդն աստվածային» (Ֆ. Դոստոեւսկի):

*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ




*Սկիզբը՝ էջ 4*

Հայերը դիմագրավելու միջոցառումներ ձեռք առան: Այգեստանում հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար ստեղծվում է զինվորական մարմին՝ Արմենակ Եկարյանի ղեկավարությամբ, Արամ Մանուկյանի (Սարգիս Հովհաննիսյան), Բուլղարացի Գրիգորի (Գրիգոր Կյոզեյան), Կայծակ Առաքելի (Տիգրան Աբաջյան), Փանոս Թերլեմեզյանի, Գաբրիել Սեմերջյանի եւ Հրանտ Գալիկյանի անդամակցությամբ: Զինվորական մարմին ստեղծվեց նաեւ Քաղաքամեջում՝ Հայկ Կոսոյանի ղեկավարությամբ եւ Լեւոն Գալճյանի, Հարություն Խլղաթյանի եւ այլոց անդամակցությամբ: Պաշտպանության գործում իրենց ֆունկցիաներն ունեին նաեւ կանայք, ծերերն ու երեխաները՝ բուժօգնություն, պարենի հայթայթում եւ այլն: Իրենց տարաձայնությունները մի կողմ դրեցին հայ քաղաքական կուսակցությունները՝ հանուն ազգային շահերի:

Այգեստանում զենք կրելու ընդունակ 1,5 հազար տղամարդ կար, 505 հրացան եւ 549 ատրճանակ: Ջեւդեթ բեյի հրամանատարության ներքո կային 12 հազար զինվոր եւ ժամանակակից տեխնիկա: Ինքնապաշտպանությունն սկսվեց ապրիլի 7- ին, երբ թուրքերը հարձակվեցին Այգեստան փախչող հայ կանանց մի խմբի վրա: Հակառակորդի անհաջող գրոհից հետո հակագրոհի անցած պաշտպանական ուժերը գրավեցին թշնամու մի շարք դիրքեր:

Թշնամին օրական 300 արկ ու ռումբ էր հրետակոծում, սակայն հայերի դիրքերն անսասան էին մնում: Շուտով Էրզրումից մի գերմանական սպա է ժամանում Ջեւդեթի մոտ: Նա մի խորամանկ ծրագիր է կազմում, ըստ որի՝ գիշերը թուրքերը պետք է գրոհեին եւ ակնթարթորեն տիրեին հայերի բոլոր դիրքերին: Սակայն դա չիրագործվեց. թուրքերը 60-70 զոհ տվեցին: Այդ հաղթանակում պարտական ենք հայ կանանց եւ պատանիներին:

Ինչպես նշեցինք, Քաղաքամեջի առավել սակավ հայությունը կտրվել էր Այգեստանի հետ կապվելու հնարավորությունից: Հուսահատ բնակչության մարտական ոգին կարողացավ բարձրացնել միայն *հայ հոգեւորականությունը* (Եզնիկ վարդապետ Ներկարարյան եւ այլք): Տեղի հայերն ունեին ավելի քան 200 մարտիկ, 101 հրացան եւ 210 ատրճանակ: Այստեղ եւս թուրքերը հարձակումն սկսում են ապրիլի 7-ին եւ հենց առաջին գրոհի ժամանակ 60-70 սպանված են տալիս: Շուտով թշնամին հավաքում է բոլոր ուժերը եւ կատաղի գրոհի նետվում: Չհասնելով հաջողության՝ ապրիլի 13-16-ը բավարարվում են սոսկ օրական 250-300 արկ արձակելով:

Չնայած Վանի ողջ նահանգի բնակչության համառ դիմադրությանը՝ թուրքերը հեշտությամբ գտնում էին «անպաշտպան գոտիները» եւ կատարում իրենց սեւ գործը՝ կոտորում էին հայերին եւ թալանում ու հրկիզում վանքերն ու եկեղեցիները: Այսպես՝ միայն երեք օրվա ընթացքում նահանգում կոտորվել է 24 հազար հայ, թալանվել, հրդեհվել ու հողին է հավասարացվել ավելի քան 100 հայկական գյուղ:

Մինչ ընթանում էր Վանի հերոսական ինքնապաշտպանությունը, ռուսական զորքերը գրավեցին բազմաթիվ տարածքներ եւ հասան Վանի վիլայեթի սահմաններին: Մայիսի 6-ին ռուսական բանակը եւ հայ կամավորական ջոկատները ներխուժեցին Վանի նահանգ, ինչը հարկադրեց թուրքական հրամանատարությանը դադարեցնել պաշարումը եւ հեռանալ: Կազմվեց Վանի եւ շրջանի ժամանակավոր վարչություն: Ռուսական հրամանատարությունն Արամ Մանուկյանին նշանակեց Վասպուրականի նահանգապետ: Սկսվեց կորուստների հաշվառումը. մոտ մեկամսյա մարտերի ընթացքում արձակվել էր 16 հազարից ավելի արկ, սպանվել՝ թուրքական կանոնավոր բանակի ավելի քան հազար զինվոր: Հայերի կորուստները 350 էր հաշվառվում՝ ներառյալ խաղաղ բնակիչները եւ մարտիկները: Ձեռքի հետ, իրենց հաճույքի համար, թուրքերը կոտորել եւ բռնագաղթի էին ենթարկել տեղի ոչ մահմեդական մյուս ժողովրդներին եւս՝ ասորիների, եզդիների եւ այլն, որոնք, սակայն, արդեն նահանգում բավական քիչ թիվ էին կազմում:

1915 թ. հուլիսին, երբ ռուսական զորքերը ժամանակավորապես հեռացան քաղաքից, իր օջախը լքեց մոտ 200 հազար հայ: Ճանապարհին ենթարկվելով զանազան ավազակախմբերի հարձակումների՝ նրանցից փրկվեց ավելի քան 150 հազարը: 1918 թ. այնտեղ վերահաստատվեցին դրանցից 25 հազարը, որոնք, սակայն, նույն թվականին ենթարկվելով թուրքական բանակի հարձակմանը, հարկադրված եղան կրկին հեռանալ իրենց բնօրրանից:

Այսպիսով, արդեն 1918 թ. Վանի նահանգն ամբողջովին հայաթափ եղավ:

Ընդհանուր առմամբ, Վանի նահանգի հայության զոհերի թիվը գերազանցեց 75 հազարը, որից մոտ 50 հազարը զոհվեց գաղթի ճանապարհին:

Վանի հերոսամարտի մասին ընթերցելիս ակամայից հիշում ենք ինքնապաշտպանության ականատես գերմանացի մի սպայի (որն, ի դեպ, թուրքական ռազմական պլանների հեղինակներից էր) խոսքերը. «Հայերը հուսահատորեն պաշտպանվում էին բոցավառվող տների ավերակներում՝ մինչեւ վերջին շունչը կռվելով ազատ Հայաստանի եւ Սուրբ Խաչի հաղթանակի համար: Ես հազվադեպ եմ հանդիպել կամ ենթադրել, թե երբեւիցե կրկին կտեսնեմ այդպիսի կատաղի կռիվ, ինչպիսին ես ականատես եղա Վանի պաշարման ժամանակ»:

***1915 թ., ապրիլի 7-ից մինչեւ մայիսի 6-ն ընթացած Վանի հերոսական ինքնապաշտպանությունը հայ ազգային-ազատագրական պայքարի փառավոր էջերից մեկն է: Այն հնարավորություն տվեց 150 հազարից ավելի հայերի՝ փրկվելու անխուսափելի ոչնչացումից, եւ օրինակ ծառայեց Արեւմտյան Հայաստանի մյուս վայրերի հայության համար:***

*Միքայել ՄԱԼԽԱՍՅԱՆ*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր. 16. 2. 2009 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**